

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՆԱՆ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը Սահմանադրութեան վերաբնութեամբ կը գրադի: Թիւրքիոյ սպառնչները եթէ արածուած ըլլային, ինչպէս երբեմն, Օրացոյցին վերջը պատմական գէտներու ու ժամանակագրական ցուցակի մը յաւելուածը կցելու, պիտի կրնայինք 1898 ի համար հրատարակուածին մէջ կարգաւ:

« Ի սկզբնաւորութենէ վերաբնութեան Սահմանադրութեան ազդիս Հայոց տմբ. 28 »

Կենք հիմնական աստիքստներս մեր ծանրաբեան յիշողութեան խորը կը գտնենք հին բանաձեւ մը զոր ա՛լ բերնուց ստրկած էինք մեր երիտասարդութեան, մինչև իսկ պատանեկութեան, օրերը. մշտապէս վերջարանը Ազգային Ժողովին հրաւերներուն:

Կ Ա Ր Գ Ի Ն Գ Ր Ո Յ

Վերաբնութիւն Սահմանադրութեան. Գլխի Բ. Թաւային մատակարարութիւն:

Խրիմեանի պատրիարքութեան օրովը կը սր Ազգ. Ժողովը սկսաւ վերաբնել Սահմանադրութիւնը Ռուսիոյնեանի ծրագրին վրայ, ու շարունակեց այդ ձեռնարկը Ներսէսի պաշտօնավարութեանը: Օր մըն ալ ժողովին օրակարգէն ջնջուած գտնուեցաւ այդ վերաբնութիւնը՝ որ Սահմանադրութեան ջնջումը պիտի ըլլար: Սուլթան Ազիզի յաշորգած էր սուլթան Համիտ:

Երբ Պատրիարք ընտրուեցաւ Յարութիւն Կախիզպուր, մինչև Տարսանել անոր ընդառաջող հրաւիրակներուն մէջ կը գտնուէին Սահմանադրութիւնը վերաբնութեամբ մեղսել ցանկացողներէն ոմանք. ասոնք ճամբան նորընտիրին գլուխը լեցուցին. հանդիսաւոր երգումին օրը սակայն պատրիարքական ատենաբանութիւնը վերջացաւ առանց վերաբնութեան յիշատակութեան. էֆէնտիները ժօռնակալով Պատրիարքին բան մը փոփոսային ախանջէն:

— Հա՛, ազէկ միտքս ձգեցիք, ըսաւ ծերունին: Երեսփոխան էֆէնտիներ, սա Սահմանադրութեան վերաբնութիւնն ալ պիտի շարունակենք, անանկ չէ՛:

— Հա՛, ազէկ միտքս ձգեցիք: Երեսփոխան էֆէնտիներ, սա Սահմանադրութեան վերաբնութիւնն ալ պիտի

շարունակենք, անանկ չէ՛, ըսաւ քանի մը տարի ետքը սերիշ նորընտիր մըն ալ, Աշքեան խորէն պատրիարքը: Անոր ալ ընդառաջած էին նոյն էֆէնտիները մինչև Արմաշ, անոր ալ գլուխը լեցուցին էին, ու ան ալ հանդիսաւոր երգումին օրը մտցած էր հրահանգը, ու միեւնոյն փոփոսը իր ախանջէն ալ վար կը շնջար:

Աշքեանն ալ զնաց, « աշքերը բաց », առանց վերաբնութիւնը գտնել օրակարգին մէջ գեանդելու: Իզմիրլեանի շարջը գեները չկրցին գեղերիլ, բայց աւելի բան երբեք ուժովցած յուսալի վերերեցան Օրմանեանի պատրիարքական ամսոյն թղթատիքը: Համբերութիւնը միայն առաքինիներուն պատկը չէ:

« Դեանագէտ » էֆէնտիները պիտի յաջողին այս անգամ խորտակել այն սահմանադրութիւնը որ սերիշ բան չէ բայց եթէ հայ ժողովրդին հայրենի աւանդական իրաւանքներուն մատուցները իր մէջ պահպանող Արքութեան Տոպանակը: — Այս հարցումին սրտը պատասխան տալ գիտար է. ազգը Օրմանեան պատրիարքին եթէ ճառագայլութիւն կրնայ սպասել, չարիք ալ կրնայ վախնալ: Հայ պատրիարք մը իր ազգին օգտակար ըլլալու համար պէտք չէ սուլթան Համիտին հետ գիւանդակասկան էշէք իտպալու ելլէ. Սուլթանը գիւանդակասկան չի վախնար, մանաւանդ երբ անոնք հայ են. իր երկիւղը շիտակ մարդէն է միայն, ինչպէս Իզմիրլեանը:

Օրմանեան պատրիարքը բաւական գիտար վիճակի մէջ է: Եթէ սուլթանին ցանկութիւնն է Սահմանադրութեան հիմնովին փոփոխութիւնը, նոյն իր ձը կը տածեն նաեւ Դրան էֆէնտիները, եկեղեցականներու մէկ մասը եւ ազգեցիկ վաճառականներ. ասոնք ամենքը մէկտեղ կը ճնշեն պատրիարքը:

Վերաբնութիւնը թղթովին սոյորէն եղանակաւ կը կատարուի: Չենք ալ կրնար զիտնալ թէ ինչ փոփոխութիւններ տեղի պիտի ունենան. սակայն յայտնի է թէ սուլթան Համիտի վաւերացումին ներկայացուած ծրագիր մը իր ազատական ու ժողովրդական սրամազրութիւններովը չէ որ ուշագրաւ պիտի հանդիսանայ: Նուրեան էֆէնտի 1885 ի ծրագիրը, աւելի կատարելագործեալ, անտարակայս Քաղաքական ժողովին ուղեցոյցն է: Խօսինք անիկ առաջնորդութիւնով:

Ամէն բանէ առաջ « Սահմանադրութիւն » բառն է սուլթանին շիղերը գրողը: Որքան տտեն սր սահմանադրութիւնը իսլամներուն մտքին անհպելի գաղափար մըն էր, բառն ալ Հայոց բերին մէջ զուտ կրօնական բացաւարութիւն մը համարուած էր. բայց հիմա իսլամները մենկ « շար օրինակ » կ'անեն եղեր: « Չար օրինակ » նաեւ ժողովրդական ընտրութիւններու գրութիւնը որուն ջնջումը

կամ ծայրայեղ սեղմումը վերաքննութեան պարզեցնելն մէկը պիտի ըլլայ:

Պատրիարքը վերաքննեալ Սահմանադրութեան, կամ ինչպէս պիտի կոչուի «կոնստիտուցիան» զօրութեամբ պաշտօնապէս սուլթանին կողմէն նշանակուած պաշտօնեայ մը պիտի ըլլայ: Պատրիարքական ընտրելիներու ցուցակը նախապէս Դրան հաղորդուելով, անհաճոյ անուններու ջնջումէն յետոյ ընտրութիւնը պիտի կատարուի հաճելիներու մէջէն:

Սրբազրեալ ցանկի գրութեան ուրիշ մէկ «առաւելութիւնը» պիտի ըլլայ պատրաստել թրքանուէր եկեղեցականներու նոր սերունդ մը: Առաջնորդական եւ անկէ պատրիարքական աթոռին հասնելու համար հայ եկեղեցականը ասկէ ետքը աչքերը յառելու է միայն թիւրքին ձեռքը. եթէ ընտրութեան քուէն ազդիւն է, քուէտուփը սակայն պիտի գտնուի թիւրքին ձեռքը. ան միայն ուզած քուէն պիտի ընդունի:

Արդի հայ եկեղեցականութեան պարագլուխները ցընծութեամբ պիտի ողջունեն ազդին ընտրողական բացարձակ իրաւունքին չափաւորումը, այսինքն ջնջումը, որ իրենց ասջե պիտի հարթէ պատրիարքական աթոռը բազմելու ազգային ո՛ր եւ է խոչընդոտ: Բարթողիմէսները, Մեսրոպները, բարձր աստնց նմանները առ այժմ «տունը մնալու» գաղտնաբերուած են. երբ որ մը ազգը պարտաւորուի իրենցմէ մէկը միայն հոգեւոր պետ նշանակել, ամենքն ալ հաւատարապէս կրնան յուսալիք ըլլալ: Իզմիրլեաններու թուականը վերջնապէս կը փակուի:

Աւելորդ է շեշտել Դրան ծառայութեանը մէջ գտնուող դատակարարին ակնկալութիւններուն վրայ, եթէ երբեք յաջողին Պատրիարքարանը իր ժողովներով ու պատրիարքով Դրան մէկ պաշտօնատան վիճակին վերածել: Յիշեցնենք սակայն թէ այդ էֆէնտիներու աչքին քրէական ուճիր մըն է, որուն պատասխանատուութիւնը Սահմանադրութեան վրայ կը ծանրանայ, 1895 ին առանց իրենցմէ մէկուն անդամակցութեան Քաղաքական ժողովի մը ընտրութիւնը:

Հայ էֆէնտիները եթէ նկատուած են ազգը իրենց անձնական շահերուն զոհողներ, անոնցմէ վար չեն մնար նոսե կարգ մը վաճառականներ ու սեղանաւորներ ալ, մանաւանդ կառավարական շրջանակներու հետ դորձ ունեցողները: Ասանկները միշտ փափաքած են պատրիարքարանը անտնել այնպիսի անձերու ձեռք որոնցմէ իրենք «չաժնան» փաշաներու հետ իրենց յարաբերութիւններուն մէջ: Պէտք է յիշել թէ 1895 էն յետոյ այդ սեղանաւորները ու վաճառականները միանալով էֆէնտիներուն մեծադուզ պահանջեցին իզմիրլեանի հրատարականը:

Օրմանեան պատրիարքը այդ գաշտակցութեան ազդեցութիւնը կը կրէ. սակայն դիմադրու է թէ զայն կազմուցները կը ներկայացնեն ամենաչնչին փոքրամասնութիւն մը, եւ ամենաստորին անձերէ կազմուած: Աւերելոյթ տաղանդի, աւերելոյթ կրօնքի, աւերելոյթ անկախութեան ծածկայթններուն տակ մարմնացումներն են ամէն ախտի մայր շահամուլտութեան:

* * *

Սահմանադրութիւնը սուլթաններէն շուրջ մը չէ մեղի: Գրաւոր օրինացումն է ազգային աւանդութիւններու սրտնք

անյիշատակ ժամանակներէ ի վեր անվթար պահպանուած են, ով որ ալ եղած ըլլայ հայ ազգին վրայ սիրող օտար իշխանութիւնը: Մեր նախորդ սերունդները շատ խելացի եւ հեռատես գանուեցան օրինական կերպարանք ապրով այս աւանդութիւններուն սրով գանուեց անմատչելի ըրին նոյն իսկ «Թիւրքիմացութեան»:

Հայ ազգը եթէ իր նիւթական կեանքը անօրինելու ազատ չէ, սակայն գտնէ իր մտաւորական ու բարոյական զարգացումին տէրն է շնորհիւ Սահմանադրութեան: Սահմանադրութիւնը ազգային ինքնավարութեան կէտն է. անոր ձեռք զպցնել չըլլար:

Շատ եղան, ու զօրաւորներ, Սահմանադրութեան դէմ դաւադիրները, բայց միշտ յաղթուեցան, վասն զի իրենց հակառակորդներ ունէին ամէն հրապոյրի գէմ ըմբոստ երեսփոխաններ: Յիրուցան, վտարանդի տարազիրներ են հիմա ազգային իրաւունքներուն ախոյեաններէն շատերը, բայց արտարուած չեն իրենց մարքերն ու սրտերը. ուր որ ալ ըլլան արթուն կը հսկեն հայրենի ժառանգութեան մնացորդներուն վրայ: Այն օրը որ Սահմանադրութեան վաճառումը կատարուած իրողութեան մը վերածել ուզուի, գերազայն Արգարութիւնը որ ժողովրդին հոգիէն կը բղխի, «կեցէ՛ք» պիտի ըսէ: Այս ճշմարտութիւնը թող չմոռցուի Պոլսոյ պատրիարքարանին մէջ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Մ Ի Ի Ի Զ Զ Ի Ն

Արեւելեան վրձիտ գիշեր կապուտակ
Որ անընդհատ էր գողգողում լոյսերու՝
Կը ծաւալէ ազամանդեայ երկնից տակ
Ճաճանչալից միջոց՝ հեռու եւ հեռու:

Ծովը կազուկ եւ ոսկեթել կ'երեւայ,
Զոյն աստղերու կը խաղերզկն բեր ցուրեր.
Խոխոջաձայն ոսկի ալիք կը լըւայ
Ոսկեղջիւրի ափը՝ գոր մուլթ է ծածկեր:

Պոլիս ամբողջ ըստուերակերպ սեւութեամբ
Կ'երեւցընէ գիշերային ուրուական,
Եւ կ'երեւան քաղաք ու գիւղ իբրեւ ամպ
Որ ձեւ կ'անու, բազմաստիկ կերպարան:

Ամէն կողմէ վիշտերէն սուր սըլաք
Երկինքն ի՞նչեր կ'ուզէն, բարակ մէջքերնին
Փօսի կապած կանթեղներու շողարձակ
Որ մերթ ընդ մերթ ազօտաջահ կը մեռնին:

Հանգիստաւոր լուսագիշեր մըն է աս
Եւ համօրէն իսլամութեան նուիրական.
Ու ամենայն կողմ թըրթըռալ կը տեսնաս
Հազարումէկ շողեր լոյսեր խնդութեան:

Վոսփօրն դարձած դուբոցածիր կը կարծես,
Դարձած պայծառ ակընվանի շուրն յըստակ
Ուր քարշ կուզան ճառագայթներ հրքազէս
Ուր կը սահի մէկ եզրէն միւսը նաւակ:

Քամուն առջեւ իմ սրտուհանրո բացած
Արմըկալից՝ ես կը նայիմ ծովուն վառ.
Հապտերնեբու պըլպըլութներն նրբացած
Կը յօրինեն երկայնաձիգ ոսկի բար:

Կը փըշէ շունչ մը խընկահատ երեսիս,
Լըռիկ գիշերն ակնաբըրթիթ կը ցոլայ.
Կը փայտայէ խաղաղութիւն իմ հոգիս,
Ու ման կուգայ լուսինն սոօք արծաթեայ:

Բայց հեռուր աղաղակեց մըզկիթին
Աւազ մ'ազգու զեղպեղանօք անվախճան.
Ամենուրեք մահմետականք կ'աղօթին —
Ո՛վ պաղատանք ասելութեան, սխտթեան:

Ես կը լըսեմ ձայնը թըռիչ տեղէ տեղ,
Եղանակիչ անուշութեամբ նեղաւոր.
Երկնուստ կ'իջնայ կարծես մեզի բօթ մ'ահէր
Զոր պատգամիչ պիտի գայ վաղը շեփօր:

Ես կը խորհիմ որ աւասիկ այս գիշեր
Քապքէ բաղաք այսպէս, զիւղէ զիւղ այսպէս
Պիտի հընչէ խաղաղ ժամուս բընաբեր
Խալամի ձայնն որ կը սպաննայ կորուստ մեզ:

Այս՝ կորուստ ան կը սպաննայ չարամահ
Քրիստոնէին որ անօրէն է եւ շուն
Որ չի ճանչնար մուսուլմանին կրօնապահ
Օրէնքը սուրբ եւ միմիայն սըրբութիւն:

Թող կեանքներն զըլխուն վրայ անպահաս
Տեղայ նըզովքը վրէժիւրնդիր Առաւօծայ.
Թող անպարմ խըղլէ վանի օրահաս,
Հանեցէք շուտ անոր աչերը բրածոյ:

Թող բար դատնայ հացը պըղծած կեանքներն,
Թող ջուր աղբիւրը տայ անոր թունով լի.
Կտիեցէք, թող բոցեր անոր ասկ վառին,
Թող անհաւաս փըշէ հոգին գարշելի:

Այսպէս քաջերն կը հընհընան խալամին
Երբ կը լըսեն միւէզզինի ձայնը մեծ
Զոր ցիրուցան կ'ընէ երբեմնն բամին՝
Մինչ կը գտայ բարձրութեանն ահընկէց:

Կ'ըսեն՝ Ելենք մենք թուր առած միաբան
Փողտանք սա քրիստոնեաներն գարշահոս:
Ի նչ գեղեցիկ գիշեր. թըշուա՛ն Հայաստան,
Վաղը կարմիր պիտի ծագի առաւօտ:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ

Լը Գորէսբոն տան Ֆրանսական հանգէսը իր
1897 ապրիլ 10ի թիւին մէջ հրատարակեց ուսումնասի-
րութիւն մը «Կովկասի հայերը» վերնագրով: Շատ քիչ
անգամ պատահած է մեզ եւրոպական մամուլին մէջ զըտ-
նել Հայերուն մասին յօդուած մը այսքան իրազեկ, այս-
քան արդարագատ ու անաչառ: Յօդուածը, թէեւ Եւրո-
պացիներուն համար գրուած, իր մէջ կը բովանդակէ այն-
քան կարեւոր տեսութիւններ հայոց մասին որ մեծապէս
կրնանք օգտուիլ անոր ընթերցումէն:

Ա.

Ռուսիա, որչափ ալ իր տիրապետութիւնը ամրախա-
րխա հաստատած է Սեւ ծովուն ուկրասից ծովուն միջեւ,
տակաւին բարոյապէս տիրացած չէ իր կայսրերուն աշ-
խարհակալած երկիրներուն: Կովկասի մարտասէր ազգա-
բնակիւթիւնները քառասուն տարիէ ի վեր գէնքերնին վար
գրած են: Բայց անոնցմէ քիչերն են որ ուստական ազ-
պեցութիւնը ընդունած կամ կրած ըլլան. շատերը անոր
ըմբոստ կը մնան: Կովկասցիները, Պարսիկներուն կամ
թիւրքերուն հետ ունեցած պատերազմներուն մէջ, լոկ
վայրի հրոսակներ էին. այսօր որ մուսուլման իշխանու-
թեան հետ գէմ առ գէմ մնացած են, կարծես նոր ժո-
ղովուրդներ կազմուած են, ժողովուրդներ սրոնք ա՛լ միա-
ցած են ազգային զօրաւոր ըղձանքներով. իրենց-գարա-
ւոր ծաղումը կը յիշեն. իրենց աւանդութիւններէն միայն
առաջնորդութիւ կ'ուզեն. իրարմէ կը բաժնուին ու իրենք
իրենց մէջ կը կղզիանան:

Հայերուն մէջ է որ այս անկախութեան զգացումները
ամենէն աւելի խորապէս քանդակուած են:

Բաւական Հայեր ճանչցայ թիֆլիս, շուկայի վաճա-
ռականներ, օրադրողներ, «Մշակ»ի կամ ուրիշ թերթե-
րու խմբագիրներ: Հաճութեամբ կը տեսնուէի իրենց հետ
իրենց կեանքին, իրենց պատմութեան, իրենց ցաւերուն
եւ իրենց յոյսերուն մասին: Ասիկա ան ասեմն էր երբ
Մասիս լեռնէն անպին օսմանեան մեղեանդութիւնը ամե-
նէն աւելի ուժգնութեամբ կը հարուածէր Սուլթանին լու-
ծին տակ դանուած քրիստոնեայ բնակիչները. օսմանեան
Հայաստանի նահանգներէն ամէն օր կը հասնէր քստմեղի
Չարդերու լուրը: Իմ թիֆլիսի Հայերս թախծութեամբ կը
խօսէին ինծի այդ գեղազգ երկրին վրայ. իրենց կրօնքն էր
որ կ'անարգուէր, իրենց եղբայրներուն արիւնն էր որ կը
հոսէր: Բարձրաձայն իրենց զայրոյթը կը յայտնէին ընդ-
գէմ Եւրոպայի որ հանգիստես կ'ըլլար այդ կոտորած-
ներուն ո՛չ թէ անխօսուկ, այլ տկար բողոքներով, ճիշդ
այնչափ միայն որչափ պէտք էր սրպէս զի չհարծուէր թէ
արձակ համարձակ կը հուանի եղածին: Ո՛րչափ անգամ
իմ առջեւ կ'աւաղէին Ֆրանսայի անշարժութեանը հա-
մար, այդ վեհանձն ազգին որ վարձեցուցած էր հարստա-
հարեալներուն աչքերը գէպի իրեն դառնալ: Ուրեմն ա՛լ
Ֆրանսա չէր հաւատար սպասութեան, արդարութեան,
եւ եսասիրութիւնը փճացուցած էր սրբեմն ինչ որ անոր
բարոյական ուժը կը կազմէր, այսինքն մարդկութեան սէ-

ըր, մեծ զգացումները, գեղեցիկ պատրանքները: Մեր անտարբերութիւնը կը վերագրէին մեզի Ռուսիոյ միացնող կապերուն: Զարը, հանրապետութեան հետ զաշնակցելով, իր ամբողջ զգուշութիւնները ձեռք առած էր ազատական վարակման ամէն վտանգի դէմ. բայց Յրանստ այս միութեան մէջ մտոցած էր իր սկզբունքները եւ ուրացած իր աւանդութիւնները:

Երբոր խօսքը Ռուսիոյ վրայ կը գանձար, խուզ գրգռութիւն մը զգալի կ'ըլլար իրենց գաղափարներուն մէջ: Գաղափարաբար կը գանգաւէին թէ ձարին կառավարութիւնը, որ զբոսի հայերուն օգնութեան հասնելու փոյթ չունէր բնաւ, ներսի հայերուն նկատմամբ ալ ճնշողական միջոցներ ի գործ կը դնէր: Ռուսիա այդ հայերուն կը մեղադրէր իրենց գործունէութիւնը, իրենց հարստութիւնը. կ'ուզէր նուազեցնել իրենց ազգեցութիւնը: Զանոնք կը հալածէր իրենց բարդաւեցմանը, իրենց մտաւորական զարգացմանը ինչպէս նաեւ իրենց ազգայնութեանը համար: Իրենց թիւրքիոյ եղբայրներուն նկատմամբ Ռուսահայերուն ցոյց տուած կարեկցութեանը մէջ՝ Ռուսիա կարծած էր տեսնել հայկական ազգային գաղափարին վարժումը, Ռուսիայէն անջատուելու ձգտումին նշանը: Ուստի ծայրայեղ ոտսացուցման բաղաբախանութիւն մը սկսած էր, առանց հստակ ընելու թէ իր հայ հպատակներուն զգացումները, բարբերը, գիտակցութիւնը կը վիրաւորէ:

Այս տրտունջները ճշմարիտ են: Ես չչատացայ միայն Հայերուն վկայութեամբը, որոնք չէին կրնար բուսրովին անաշտ ըլլալ: Ռուսեր հարցափորձեցի, որոնք յայտնեցին իրենց մտահոգութիւնը՝ Հայերուն ինքնօրնութեան ձգտումներուն եւ Անդրկովկասի մէջ իրենց ունեցած առաւելակշռութեանը համար: Առանց ուստական հոգին դուրս ելլելու, ուզեցի հայկական կեանքին հետ շօշափման մէջ մտնել, հոն ուր ան կը ծաղկի տակաւին՝ նոր բարբերուն արշաւանքէն զերծ: Այցելեցի Երեւանի եւ կարսի նահանգները. Էջմիածին, Հայոց կրօնական կեդրոնը. Անի, իրենց հին մայրաքաղաքը, ուրկից կեանքը խոյս տուած է վեց դարէ ի վեր: Դէս ու դէս, կրցայ դիտել թէ Հայերուն ու Ռուսերուն միջեւ ի՞նչ անջրպետ զրած են ցեղն ու կրօնքը, ի թէ ի՞նչպէս այս անհամաձայնութեան պատճառներուն վրայ կ'աւելնան անտեսական մրցման հակառակութիւններ: Խորագրնեցի թէ մասկովեան կայսրութիւնը ի՞նչպէս կը վարուի իր հայ հպատակներուն նկատմամբ, ե ինծի թուեցաւ թէ անոնց նկատմամբ դործածած կասկածոտ արամադրութիւնները, անոնց հարկադրած կեանքի պայմանները՝ մեզի կրնան օգնել հասկնալու Արեւելքի գործերուն մէջ իր բռնած ընթացքը:

* *

Տասնեւիններորդ դարուն սկիզբը, Հայաստան բաժնուած էր թիւրքերուն, Պարսիկներուն եւ Վրացիներուն միջեւ: Ռուսերը առաջին անգամ հայկական հողին վրայ ոտք դրին 1802 ին երբոր Վրաստանի տիրեցին. եւ այդ թուականէն ի վեր անդադար տարածած են հոն իրենց իշխանութիւնը: 1804 ին, Պարսից գէմ վարած պատերազմի մէջ, Երեւանը պաշարեցին՝ առանց կարենալու գրաւել. բայց, 1827 ին, Բաքոյի վրէժաբարքը առաւ յարձակմամբ: Էպիտրոնէի զաշնակցիւրը Ռուսերուն տուաւ Ախլց-

խան եւ Ախալքալաքին: Վերջապէս, Սան-Սթեֆանոյի զաշնակցիւրը, որ 1878 ի փոռաւոր պատերազմը պսակեց, Արեւմտահայ Բ. ի թողուց կարսի, Արտահանի, Պաթումի եւ Պայագիտի հայկական գաւառակները: Պերլինի Վեհաժողովը Պայագիտը թիւրքիոյ ետ տուաւ:

Ռուսիա այսօր տէրն է պատմական Հայաստանի մէկ հինգերորդին եւ իր հստին վրայ ունի մէկ միլիոն հարիւր հազար հայ հպատակ: Փոքր թիւ սը գացած է բազմ փրնտու Ռեզրպուրի, Մոսկուա, Օսէտա, Աստրախան: Շատերը տարածուած են Հայաստանի զրացի գաւառները եւ Անդրկովկասի մեծ բաղաբախները կը լեցնեն: Միւսները, մեծ մասամբ գիւղացի, իրենց նախահայրերուն հոյը թողած չեն. հոն կը բնակին միախուլման թաթարներուն հետ թով բովի (*). այս երկու թշնամի ցեղերուն եւ կրօնքներուն բնակակցութիւնը միեւնոյն հողին վրայ՝ ո եւ է ընդհարում առաջ չի բերեր, մասկովիսան սեւ արծիւն տակ:

Քաղաքական ստրկութիւնը կ'եղծանէ զայն ընդունող ժողովուրդը: Հայաստան կրած է օտար տիրապետութիւնը. երբեք համակերպած չէ անոր: Ու ստոր համար է անշուշտ որ ազգային խառնուածքը բնաւ այլատարած չէ: Զննենք այն Հայերը որոնք ուստ եղած են աշխարհակալութեամբ: Տեսնենք զանոնք իրենց թիֆլիսի կամ Պարբուի գրասենտակներուն մէջ: Անոնց վրայ չփրնտուներ բնաւ իր աստիճանին ու կերպերուն ապահով մարդուն հանգարտ ու հպարտ վայելչութիւնը: Բնաւ հոգերնին չեն ընէր շնորհալի ըլլալ, գեղեցիկ ձեւեր ունենալ: Իրենց սրահը՝ խանութիւնն է: Վրացիները, թեթեւ ու մսխող, վերէն կը նային Հայերուն վրայ, տգեղ ու աղտոտ կը գանեն անոնց կեանքը. իրաւ է որ Հայերը ինքզինքնին սիրցնելու էն գէշ կերպարանքը կ'աւանտ, առնելիքը կերպարանքը: Մենք որ նախապաշարում չունինք եւ ո եւ է ահաճելի յիշատակ չստիպեր մեզի գէշ խօսելու այդ գործի մարդերուն մասին, մենք կրնանք աւելի արգար պատաստան մը ընել: Արտաքին երեւոյթէն անդին, որ հասարակ ու ահաճելի է, ջանանք հօգիին թափանցել: Այդ ինքնամփոփ ու անխօսակ մարդիկը լափլիզող գործունէութիւն մը ունին ու կուրին մէջ ծայրայեղ մրցում մը. բա՛ն մը չէ կրցած պակսեցնել ժառանգական կորովի այդ խարխիւր, ո՛չ ցեղին կրած թշուառութիւնները, ո՛չ յեղաշրջումները որոնցմէ անցած է: Այդ կասքով թըրծուած էակներուն մէջ բուլոր գաղանակները ծայրայեղօրէն ձգտուած են, ամէն բան խիստ է. լիալիր ուրախութեան, թեթեւ զուարթութեան, անդորր վայելման համար ծնած չեն: Իրենց մտահոգ ճակատը ցոյց կուտայ մաքրին պրկումը, աշխատութիւնը, զաժան հաշիւը: Աշխատելու դատելու այս եռանդը, այս յամառութիւնը՝ ահաւասիկ ամենէն առաջ ինչ որ դուրս կը ցատեցնէ գիրենք կովկասի ազգաբնակչութեանց մէջէն, որոնք մեծ մասամբ թուլցած են եւ անկարող են թոթուելու արեւելեան ծուլութիւնը:

Հայերը իրենց նկարագրին գերազանցութեան գիտակցութիւնը ունին, եւ ասիկա զլիաւոր պատճառն է որ

(*) Տեղ տեղ, Հայերուն եւ թաթարներուն համեմատութիւնը շատ բարձր է: Երեւանի նահանգը, օրինակի համար, 377,000 Հայ եւ 251,000 թաթար կը պարունակէ. (կովկասեան տարեցոյց 1896 ի):

իրենք իրենց մէջ կ'ամփոփուին, միւս ցեղերէն կը կղզիա-
նան: Անգրիտիկասի այն բոլոր տեղուանքը ուր բազմը բով
բովի բերած է զիրենք, իրար կը ճանչնան, իրարու ձեռք
կուտան եւ իրար կը բռնեն: Չառ ժողովուրդ մը կը կազ-
մեն: Չիրենք միացնող ազգային կապը բան մը կորսնցու-
ցած չէ իր ումէն: Ազգայնութիւն մը կը կազմեն: Իրենց լեզուն
ունին, իրենց հայրերուն լեզուն՝ խոսքս ու
կոկորդային ձայններով, ու թիփլիսի մտնատակտները՝
որոնք արդի զարգացման տիրացած են, մտոցած չեն գոյն,
ինչպէս նաեւ հայրենի լեռներուն զեղացիները: Իրենց
գրականութիւնը ունին, իրենց ուսուերէն ու հայերէն
թերթերը: Իրենց Եկեղեցին ունին, լուսաւորչական Եկե-
ղեցին, որ մինչեւ հիմա պահած է իրեն յատուկ կարգու-
սարքը, ու իրենց գլխորդները ունին զորոնք իրենց հայրերը
հիմնած են եւ որոնք ինքնազուտ են:

ԲԻԼԻ ՄՈՌԱՆ

ԱՐԻՒՆՈՏ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

(2)

Այլ իրիկուն եղած էր: Քարտիին վրայ նոր գոհներ
չէին բերեր մեծոյնելու, սակայն կալաթայի մէջ միշտ կը
լուսէին հրազենի ձայնները: Օտարազգիներու պատկանող
բոլոր շէնքերուն վրայ կը ծածանէր անգլիական, ֆրան-
սական, իտալական կամ յունական դրօշակը եւ կը տես-
նէինք այդ դրօշակաւոր տուներու աստիճաններուն վրայ
խումբ խումբ մարդիկ ու կիներ որոնք շուարած կ'երթային
կուզային:

Հագիւ կէս ժամ անցած էր ոստիկաններու վճռուե-
լէն ի վեր, երբ յանկարծ լսեցինք յիշոցներով խառն ա-
զգազաններ ու ահա՛ մաքսատան վարի կողմէն երեսունի
չափ թիւրքեր երեւցան, որոնք իրենց բերքը շարժելով
դէպի «Սիտոն» կը յառաջանային: — «Հայերը պէտք է
մեզի յանձնել, եթէ ո՛չ ամենքդ ալ կը շարդենք», կ'ոտ-
նային այդ կատղած դեւահարները, որոնց շատերուն բի-
րերը արդէն արիւնով ներկուած էին:

Յայտնի էր որ այդ արշաւանքին մէջ վճռուող ոստի-
կաններուն մատը կար:

Նաւապետին հրամանին վրայ, անմիջապէս ֆրան-
սական դրօշակ մը բերին նաւատարները ու փոսեցին սան-
դիսի վրայ, յետոյ վեց հոգի, բէլովլերները ձեռքերնին,
սանդիսին զլուխը կեցան եւ նաւապետը գոչեց:

— Առաջին շունը որ համարձակի դրօշակին վրայ
կոխելով վեր ելլել, մեծոցեցէ՛ք:

Ոստիկանը որ միշտ նստած էր աթոռի մը վրայ,
«Սիտոն»ի սանդիսին դէմ, տեսաւ բոլոր այդ պատրաստու-
թիւնները եւ տեղէն ցատրելով մաքսատուն մտաւ. բայց
հազիւ թէ խուժանը հասեր էր սանդիսին գլուխը, ութ
զինուորներով գուրս ելաւ մաքսատանէն եւ եկաւ սանդու-
խը պաշտպանելու...

Նաւուն մէջ ամենքս, սոսանց բացառութեան, մէկ
փափաք մը ունէինք. կ'ուզէինք որ թիւրքերը սան-
դուսին վեր ելլել փորձէին: Ու տեսակ մը յուսախաբու-
թիւն եւ ցատում գզացինք երբ տեսանք որ զինուորները
եկան խուժանը ցրուելու: Խսկապէս պաշտպանութիւնը
աւելի սճրագործներուն համար էր:

Խուժանը հեռացաւ հայհայտից սպանալիքներով:

Քիչ մը ետքը Մէսաժրոյ Մասիթիմ՝ ընկերութեան
անօրէնը, զոր արդէն «Սիտոն»ի մէջ ապաստանելէն՝ թիչ
յետոյ տեսած էի, շողենաւ եկաւ եւ ֆրանսական հիւպա-
տոսարանին կողմէ պատուէր բերաւ որ շողենաւը ծովեզ-
րէն բանի մը մեզը հեռացնեն ու սանդուսը վեր բաշեն:
Աւելցուց նաեւ որ նաւուն վրայ յարձակում կ'զգած ծա-
մանակ կրակ ընեն յարձակողներուն վրայ եւ որ եւ է
թիւրքի թող չի տան նաւը մանկու:

Իր ներկայութիւնէն օգուտ բազեցինք տեղեկութիւն-
ներ աննկու համար դուրսը անցած դարձածէն:

— Ամբողջ բազաքը կոտի մէջ է, ըսաւ, յեղափո-
խականները պանքան մտած ու տիրած են պանքային եւ
ուսմբերով կը կուտին պաշարող զինուորներու դէմ: Ամէն
փողոցի մէջ մարդ կը սպաննեն, զետպանատունները լեց-
ուած են հալածեալներով: Վախն ու ստիպումը կը տիրէ ա-
մէն կողմ:

— Դեպքանները թնչ կը խորհին ընել, հարցուցինք:

— Օ՛հ, անշուշտ ազգու միջոցներ ձեռք պիտի պո-
նեն: Հրահանգ տրուեցաւ պահակ շողենաներու սրպէս
զի ֆարաբէօյի առջեւ գան շարուին, բանի մը ժամէն կը
հաննին: Հիմակուհիմա դեպքաններուն միակ դրազումն է
յեղափոխականները պանքայէն դուրս հանել:

Տնօրէնին մեկնումէն ետքը «Ժիոնա» եւ «Սիտոն»
թիչ մը հեռացան ցամաքէն ու ելնարանները բաշեցին:

Դուրսի հետ յարաբերութիւննիս խզած էինք հիմա:

Ճաշի ժամը հասաւ եւ հրաւերի առաջին զանգակը
հնչեց:

Կ'ուզեմ բացարձակապէս անկեղծ ըլլալ այս պատ-
մութեանս մէջ, ուստի կը խոստովանիմ որ հակառակ այն
ստիպելի տեսարաններուն որոնց հանդիսատես եղած էի,
մեծ ախորժակ մը ունէի այդ միջոցին: Նոյն իսկ կարծեմ
բոլոր այն յուզումները, որոնցմէ անցած էի վեց ժամէ
ի վեր, զբառած էին ախորժակս, գալարելով ստամոքսու-
թնախօսներուն կը թողում բացատրել աւիկա:

Սեղանին վրայ, բնականաբար, խօսակցութիւնը օր-
ուան դէպքերուն վրայ անցաւ: Ինչէ զատ, միայն ձեռունի
նուր եւ իր աղջիկը կային ուղեւոր. միւս սեղանակիցնե-
րը բոլոր «Սիտոն»ի պաշտօնեաներն էին: Ամէնքս ալ
միաբերան թիւրքերուն վայրագութիւններուն դէմ խօսե-
ցանք եւ վճռեցինք թէ այդ բարբարոսները դոյութեան ի-
բաւունք չունէին բնաւ: Խօսեցանք նաեւ եւրոպական պե-
տութիւններու թոյլ ընթացքին վրայ, որոնք իրենց անձ-
նական շահերուն եւ հակառակութիւններուն կը գոհէին
մարդասիրական պարտականութիւննին:

— Չգուշի բան է այդ դեւանագիտութեան ընթացքը,
կ'ըսէր մին զինի զաւաթը պարպելով:

— Մարդ ամօթ կը զգայ Եւրոպացի կոչուելու, կ'ըսէր
ուրիշ մը՝ հաւի զիստ մը առջին բաշելով:

— Ա՛յո է ֆրանսական յեղափոխութեան արդիւնքը,
կ'աւելցնէր նաւուն բժիշկը, բերանը լեցուն:

— Անշուշտ այս անգամ՝ դեպքանները վերջ մը պիտի
տան այս կացութեան:

Այս անմեղ խորհրդածութիւններուն վրայ, սպասուե-
րը ներս մտաւ զոչելով:

— Դարձեալ մարդ կը մեղցնեն կ'որ բարափին վրայ:
Պատառնիս կ'իտատ ձգելով ամէնքս սանդուսին վեր
խուժեցինք:

Իրերով զինուած նոյն ամբսին էր որ կատաղորէն

ինկած էր երեք հայ բեռնակիրներու վրայ. հարուածները անընդհատ կ'իջնան ամէն կողմէ: Յետոյ կը տեսնենք որ սպաննիչները կը ծոին գիտնեցուն վրայ ու կը սկսին թալլել: Այս անգամ՝ երեք ոտտիկաններ ալ կը մասնակցին կողոպուտին: Չարդոյները կը մեկնին արինոտ բերրը ուսերնին զարկած, իսկ երեք ստիկանները կը նըստին մօտակայ սրճարանը եւ երեք խահուէ ու երեք նաուկիլէ կ'ապսպրեն:

Վար կ'իջնանք ճաշերնիս աւարտելու:

Երբ սուրճը խմելէ ետք նորէն կամրջակին վրայ կ'ելլենք, մութը բոլորովին կ'սխաւ է ու կազերը վառուած: Երեք գիտնեցորդ կեցած են իրենց տեղը եւ ստիկանները իրենց նաակիլէնին կը քաշեն:

Թօփհանէի կողմէն երեք սայլակ կը յառաջանան: Երբ առաջին սայլակը կը հասնի գիտնեցուն մօտ, ստիկաններէն մին կը կեցընէ զայն ու կը պոռայ սայլապանին՝ երեք հայ բեռնակիրներուն գիտկը ցոյց տալով.

— Ասո՛նք ալ մէջը գիր:

— Իմ կ'առքիս մէջ տեղ չի կայ, կը գոչէ սայլապանը, թո՛ղ միաները առնեն:

Ետեւէն եկող սայլապանը կը լսէ այդ խօսքերը ու կը պոռայ.

— Ութը հատ ունիմ կ'առքիս մէջ, տեղ չի կայ, ձիուն հոգին ելաւ արդէն, երբորդ անգամն է որ կ'երթամ կողքամ կոր:

Ստիկանները տեսնելով որ սայլապաններուն հետ վիճաբանիլը աւելորդ յագնութիւն է, կը ծոին ու գիտնեցորդն երկուքը կը նետեն առաջին սայլակին մէջ:

Սայլապանը կը բարկանայ ու նստած տեղէն վար ցատքելով գիտնեցուն մէկուն ոտքէն կը քաշէ ու գետին կը նետէ:

— Թո՛ղ հոս մնան, միւս անգամ անցնելու կ'առնեմ:

— Ո՛չ, կը գոչէ ստիկանը, հիմա պէտք է որ առնէք տանիք:

Երբորդ սայլապանը խնդիրը անուշտեղը կ'ապելու համար կը գոչէ.

— Մէկը ինձի տուէ՛ք, ես կը տանիմ:

Այն ատեն ստիկաններէն մին գետինը գտնուած գիտնեցուն մէկուն ոտքէն քաշըշելով կը տանի մինչեւ երբորդ սայլակը:

Ասոր վրայ միւս սայլապաններն ալ կը ստիպուին մէյմէկ գիտնեցուն առնել ու կ'առքերը ճամբայ կ'ելլեն գէպի կամուրջ:

Մթութեան մէջ կատարուած այդ գործողութեան պէս շարաշուք բան մը անկարելի է երեւակայել: Ամենէն աւելի սոսկալի էր այն պաղարինութիւնը որով այդ բանակցութիւնը ու գործողութիւնը տեղի կ'ունենային:

Գիտնեցորդ լեցուն սայլակները կը յաջորդեն իրարու: Մինչեւ կէս գիշեր տասներեք հատ կը համբիմ: Ամենքն ալ Թօփհանէի կողմէն կուզան ու կ'ուղղուին գէպի կամուրջ: Կէս գիշերէն յետոյ խցիկս կը մտնեմ ու կը փորձեմ քնանալ, բայց երեւակայութիւնս այն ատիճանս գրգռուած է որ անկարելի կ'ըլլայ աչքս փակել. ցերեկուան տեղարանները մզձաւանջի մը պէս աչքիս առջեւ կուզան, եւ յետոյ ատեն ատեն կը լսեմ հրազնի ձայներ որոնք միշտ կը շարունակուին ցամաքին կողմը: Կը հազուիմ ու նորէն կ'ելլեմ կամրջակին վրայ:

Աստղերով լեցուն պայծառ գիշեր մըն է. ծովին վրայ կ'երեւան շոգեմանները իրենց կարմիր, դեղին, կանաչ գուարթ լոյսերով, շոգեմակոյկներ անընդհատ կ'երթան կուզան. անսովոր ոգեւորութիւն մը կը տիրէ ծովին վրայ ամէն կողմ: Քարափին վրայ սայլակները կ'անցնին իրենց տխուր բեռներով: Ալ չեմ ուզեր համբել:

Փայտէ՛ ծալլուող բազկաթոռի մը մէջ ընկզմած, երեսու ծովին, ժամերով կը նստիմ ու կը ծխեմ: Հետուն, Ստոյ—Պուստի մօտ կը նշմարեմ մեծ մալուսնա մը որուն մէջէն մերթ ընդ մերթ բաներ կը նետեն ծովը. մալուսնային մէջ երկու պղտիկ լապտեր կը վառին: Կը զգամ թէ շարաշուք բան մը կը դառնայ այդ նաւուն մէջ եւ ուշադրութիւնս կը կրկնապատկեմ: Կամաց կամաց աւելի յստակօրէն կը սկսիմ տեսնել: Մալուսնային մէջ վեց եօթը մարդ կայ որոնք անընդհատ կը շարժին ու ատեն ատեն խոշորկէկ ծրար մը ծովը կը նետեն: Անկուսէն առաջ եկած ջուրին ձայնը կը հասնի մինչեւ ինձի:

Սպաննուած հայերուն գիտնեցուն են...

Այս գործողութիւնը երկու ժամէն աւելի կը տեւէ. գիտնեցորդ կամաց կամաց կը նետուին ծով եւ կ'երեւայ թէ ամէն գիտնեցուն հետ քար մը կամ երկաթի կտոր մը կը կապեն որպէս զի ջուրին երեսը չմնայ:

Այս մալուսնան գետ իր բնոր չպարպած՝ ուրիշ ուր կը մօտենայ, նոյնպէս երկու լապտերներով լուսաւորուած:

Սոսկումնայ վար կ'իջնեմ ու կը փախուիմ խցիկիս մէջ:

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Աղերսանդրիս, 1 յունուար 98

Գերթուզն ու օրագրողը: — Գերեզմաններուն շուրջը: — Սերվիչէն: — Ազատամտութեան դրուագ մը: — Միբայէլ փորթուզալ: — Կրծօնի մը պատմութիւնը: — Եղիշէի գերը: — Ճանոյ: — Խալախի կոխ:

Օտարը չէր միայն, Հայը ինքն ալ ատենօք բանաստեղծին կը գիմէր հայրենիքէն տեղեկութիւն ուզելու.

Ըզհայրենեացդ ստա մեղ բան, ս'ի բերթոյ.

Ու բերթոյը անոր կ'երգէր իր հին հայրենիքը, եղև մական Հայաստանը.

Ուր շքնեցին եւ զօրացան
Հայի Արմենակ Արամ Տիրարան.

Ու բերթոյը անոր կ'աւետար նոր հայրենիքն էլ, եւ հրուէր կը կարգար վազել գէպի ծաղկապսակ գարունը որ հոն կուզար.

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ
Չայն սղունելու ելլենք ընդ առաջ:

Աղևի ձիւնը շատ էր տեղացած մեր աշխարհին դըլուրի, բայց ահա գարունը. ա՛ն իր արեւովը պիտի հալեցնէ անհուն ծածկոյթը որուն տակ, վարերու խոր լուսնեան մէջ, ազգային մարտիրոսութիւնը պատրաստար է

ուսնացումի պարարտ հող մը հայտնեան. նոր առտու՛ մըն է որ կը ծաղի հայ կեանքին.

Անցան սեւ օրեր, օրեր մահահաս,
Հայոց նոր բաղդին ծաղի առաւօտ:

Ծագեցաւ այդ առաւօտը. արեգակի խաւարումի առաւօտ մը, արինակաթ, գողգողացնող: Աւ ձիւնը նորէն սկսաւ աեղալ հայուն գլուխը. եւ հայը հիմա ամէն առաւել աւելի առտանդական, բանառակզծին չէ, օրագրողին է որ անձկակարօտ կը դիմէ հայրենիքէն աեղեկութիւն խընդ-բելու, յոյսի մը նշոյլը ընդնշմարելու.

Հայրենիքէն խօսէ մեզի, ս'վ օրագրող:

Աւ օրագրողը կը սպրդի հայրենի երկիրը, կ'ակնա՛նջ բանտերուն, կը խուզարկէ շերիճները, կը պրպտէ յիշատակները, կ'անցնի օտար աշխարհներէն, եւ կուգայ աւել ախար տալ, գու՛րը մըթմըթալ, բայց միշտ սրտերը շրտա՛նդել, հաւաքը արծաթծել, մտքերը ամբացնել: Օրագրողը կը գաշնակցէ հայրենիքն ու թափառայած հայութիւնը, եւ թուշտելով կը վազվտէ ամենուն, նոր կեանքի մը աւետարտ իբր ճղաբերը:

Այդ ճիւղը նախ չերթանք չփնտռե՛նք շուրջն այն գամբարաններուն սրտնց մէջ ցեղի մը առաքինութիւնները, իբր անդրինք կանգնած, սրբական վեհութեամբ կը սըրտապնդեն զիրենք ծնող ժողովուրդը:

—Մայր, մենք քու զուակներդ ենք, կը ձայնեն. կարողի մայր ես որ մեզի ծնար. մի՛ վախնար, գուն պիտի յաղթանակես սրբան մեր նմանները աշխարհ բերելու կարող ըլլաս:

Յեղային առաքինութիւններու կենդանի արձանացում մը չէ՞ր, գեռ գերեզման իսկ չլրուած, ծեր Սերվիչէնը որ մեր արդի պատմութիւնը կը մարմնացնէ անյիշատակ ժամանակներէ ի վեր:

—«Անյիշատակ ժամանակներէ ի վեր:» Օ՛հ քրոնագրօսիկ բացատրութիւնը, պիտի գոչեն ամէնքն ալ որ պիտան թէ Սերվիչէնի գործունէութիւնը գեռ կէս դար առաջ միայն երեւան եկաւ: Եւ սակայն անջրպետը որ ժամանակը կը բաժնէ ժամանակէն, դարերու թուովը սահմաններ: Անջրպետը՝ փոփոխութիւններու մեծութեամբը կամ պզտիկութեամբը չէ՞ որ կը չափուի:

Անյիշատակ ժամանակ մը, առասպելական թուական մը չի՞րեւիր մեզի այդ 1850 էն սկսեալ տարիները սըր թիւրքիոյ պետական անձնաւորութիւնները ունկնդիր կը մնային Սերվիչէններու, եւ ասոնք ալ իրենց սրտովն ու խելովը կը յաջողէին մեղմացնել բարբարիկ ձեռքերէն հայ ժողովրդին գլուխը իջնող հարուածներուն սաստիկութիւնը: Հայուն գէ՛մ իսլամին վայրագութիւնը չափաւորելը արդէն ազգին մեծ բարիք մը ընել չէ՞ր այն ատենները: —Եւ թերեւ քիչ մըն ալ ամէն ատեն:

Հայուն — եթէ կ'ուզէք ըսնք «անգ ի հնուն» — քաղաքագիտական խնամութեան աստիճանացոյցը համարուած էր իր վրայ տիրող իսլամը ժամանակին համեմատ գործածել գիտնալու ընդունակութիւնը: Պէզճեան ամիրաներու, Պօզոս պատրիարքներու եւ Սերվիչէններու գերագանց նախատիպը համարուի թերեւ մեր պատմու-

թեան այն Սահակ հայրապետը որ իր մահէն ետքն ալ իսլամներուն հետ «քաղաքագիտօրէն» վարուելու գաղտնիքին տիրացած էր: Աբղլմենէ կը կոչուէր, եթէ չեմ' սըրտալիբ, այն զօրավարը որ Հայաստանի արաբական արշաւանքներուն տակն «նշանաւոր» կը հանդիսանար. զիտենք թէ այսպիսի պարագաներու մէջ «նշանաւոր» անուանուի ի՞նչ իմաստ սենի. ծայրայեղ վայրագութեան տիրողուն է: Հայ հայրապետ սակայն թուի թէ իր իմաստութեան ու սրբութեան համբաւովը համայն մը ատենին մեծ-բարբարօք, ինչ որ կրնայ ենթադրել տալ թէ գուցէ պարզ առասպել մը չըլլայ Որփէոսին գազանները կուրուցուցած ըլլալու աւանդութիւնը: Աբղլմենէի հասնելէն առաջ կը վախճանի սուրբ Սահակ, բայց զինքը շիրիմը հանդիպեցնելու համար ժողովուրդը կը սպասէ արաբական պետին: Աբղլմենէ կուգայ եւ մանելով վախճանեալին սենեակը երկիւղածութեամբ կ'ողջունէ մեծանուն ծերունին որ կարծես «աթուղին մէջ կը քնանար:» Եւ ահա շարժում մը. մեռելին ափը ինքնիրեն կը բացուի, մէջը թուղթ մը: Երկիւղած պատկառանքով, հաւանօրէն սարսափահար, մահմետականը կը մօտենայ դադալ-աթուղին, կ'անէ թուղթը եւ կը կարգայ: Հայրապետ անոր ինամքին (։։) կը յանձնէր իր հայ ժողովուրդը:

—Փափագէ կատարուի, ս'վ սուրբ մարդ, կը գոչէ Աբղլմենէ:

Պատմութիւնը որ ջարդուողներու թիւը բաղմապատկութեամբ գոնէ կ'արձանադրէ, չէր կրնար մեզի հաղորդել թէ մօտաւորապէս ս'րբան հայ իրենց կեանքը պարտական մնացին հայրապետին անդրշիրիմեան քաղաքագիտութեան, բայց կրնանք ենթադրել թէ թիւը խոշոր կէկ բան մը ըլլալու է:

Յետոյ շատ բացուցաւ այդ ափը, բայց մէջի աղերսաղիբը ոսկիով լեցուն. հայուն ոսկելիբ ափին նայելով՝ թիւք փաշաները անոր համեմատ վարուեցան ազգին հետ: Օր մը սակայն յեղաշրջում մը կատարուեցաւ, երբ Հայաստանցի աւանդապահ խորամանկ ամիրային սեղը անցաւ Պոլսեցի էֆէնտին. յեղաշրջում մը որ հզօրապէս ներդրածեց հայուն եւ թիւքին յարաբերութիւններուն փոփոխութեան վրայ:

—Ձեր եւ ամիրաներուն միջեւ տարբերութիւնը, կը պօտար օր մը Ազգային ժողովին մէջ Սափան Փափագեան Դուրեանի երեսին. փաշաները ամիրաներուն ափը կը նայէին, գուց փաշաներուն ափը կը նայէր:

Յեղաշրջումը սակայն մէկ օրէն միւսը չէր կրնար առաջ գալ, այլ աստիճանական փոխանցումներէ յետոյ: Փաշաները հայուն միայն ափը չէր որ կը նայէին այլ բերանն ալ. ափը պարպուելէն յետոյ շարունակեցին գոնէ անոր բերանը չկորսնցնել, մինչեւ որ էֆէնտին փաշային ափին հետ անոր բերնին ալ անձնատուր եղաւ: Թերեւ չենք սխալիբ այդ փոխանցումը թուադրելով Սերվիչէնէն որ առանց դրամի միջնորդութեան թիւք փաշային վրայ ազդեցիկ հայը եղաւ: Բժշկական հմտութեամբ միացնելով քաղաքագիտական տաղանդը, Սերվիչէն կը գրաւէր սերն ու յարգանքը օսմանեան նախարարներուն որոնք Ալի, Ֆուատ կը կոչուէին, ու անոնց միջոցաւ օգտակար կ'ըլլար իր ազգին: Ընդարձակ կենսագրութիւն մը միայն պիտի կրնար ցուցաբերել հայ ժողովրդին աչքերուն առջեւ այդ հոյակապ անձնաւորութեան եւ իրեն ժամանակակից

ուրիշ գեղեցիկ հոգիներու, լայն մաքրու խոսութիւնը: Այս թափառայած կեանքին մէջ է որ հնարաւոր պիտի ըլլայ Սերվիչէնը, Ռուսիներն, Օսեանը, Պաշտանները, Տասնանները (հինիքը), ամէնքն ալ միայն իրենց մաքրն ուժովը խաղաղեցնող, պատկերացնել իրենց իսկական մեծութեամբը: Բայց նկարիչ մը երբեմն բանի մը բարակ գիւմպի՞մ նեանելով աչքի առջեւ ամբողջ գէժը մը զգացնել կրնայ տալ: Սերվիչէնի կեանքի պատմութիւններուն հազարէն մէկը թերեւս ուրուագծել անոր ըմբռնուովը ազատասիրութեան եւ ազգասիրութեան մասին:

Ռուսութիւնը պատերազմին սկզբնաւորութեանն էր. թիւրք զինուորները մտնելով վանի Ալիւր գեղի Արարատեան նախակրթարանը քանի մը մուճակ թեւերնուն տակ առած կ'ուզէն մեկնել, բայց իրենց «աւարտութեան» մէջ հզօր ընդդիմադրութեան մը կը հանդիպին վարժապետին կողմէն, սեղացի մը, Չաքար Համբարձումեան, որ իր նախնական կրթութիւնը Պոլիս առած, իրաւունքի եւ պարագի զաղափարը կ'ուզէր պաշտպանել թիւրք զինուորին դէմ: Խեղճներ չեն կրնար ըմբռնել թէ ինչ կը պահանջէ վարժապետը իրենցմէ. եւ վերջապէս, իբր պատասխան, փոխանակ սուրը վարժապետին փոքր միտելու, մարդասիրաբար կը բաւականանան իրենց հինգ մասնորուն զբօսական շրջապայութիւն մը կատարել տալով վարժապետին ծածրակին շուրջը: Օ՛հ, սփրբը: Եւ ահա բարկահայթ բողոքի մը պայթիւնը «Մանգումէ» մէջ: Ռեմբաճիքը Մկրտիչ Փորթուղաշեանն էր, յեղափոխական դաստիարակութեան նախակարգապետ առաքելալը Հայաստան, Արարատեան ընկերութեան վասպուրակահանի անսուչ: Ինչ իրարանցում Պոլիս:—Աս ինչ է. երկու ազատակոչիլի եւ պղտիկ ապտակի մը համար իրարու ձգել հայն ու թիւրքը. ասիկայ հայրենիքը վտանգել է երբ թշնամին կը յարձակի, կ'ըսէին թիւրքերն ու մէկ քանի էֆէնտիներ:—Երբ ուսական զրօշալը կը նշմարուի Հայաստանի բարձունքը՝ ան ատեն հայրենիքը հասարակաց է, հայունն ալ է. բայց «անցնի վտանգը, երթայ բարով սուրբը:»

Պատիժը պէտք էր օրինակելի ըլլար. գիրքին գործ. ամէն անգ «պաշարումի վիճակ», գերազոյն պատաւորը զինուորական ատենը: Հրացանել փորթուղաշեանը, ջնջել «Մանգումէ»ն, բերդել փանոսեանը, ասանի կը վճուռի Սպարապետութեան դուռը: Լուրը կ'իմացուի: Արարատեանները կը յաջողին սպարապետական հեռազրէն առաջ իրենք հեռաչիր մը թռցնելով վան փորթուղաշեանն ալ անիկ թռցնել: Իսկ փանոսեանի համար ալ կը մտաբերուի Սերվիչէնը, բարեկամ սպարապետ Բէտիֆ փաշային: Սերվիչէն անմիջապէս կ'երթայ սպարապետին քով եւ կը խօսի:

- Չէ՛, առ չեղաւ, Սերվիչէն էֆէնտի, ատանի գործերու համար բարեխօսութիւն չըլլար, կ'ըսէ Բէտիֆ փաշա:
- Բարեխօսութիւն ընելու չեմ եկած, այլ օրէնքի վրայ կը խօսիմ:
- Օրէնքը ինչ է, Սերվիչէն էֆէնտի, կը հարցնէ փաշան աչքերը խոշոր խոշոր բացած. զինուորական ատեան կայ, օրէնքը ան է:
- Չինուորական ատենը ինչ է որ:
- Չինուորական ատենը, կ'ըսէ սպարապետը. եւ ձախ ու աջ ձեռքերով հրացան մը ձեւացնելով, — Պ ու մ, պ ու մ, պ ու մ, ահա զինուորական ատենը:

—Չէ՛, առ չէ, սխալ հասկցած էք, կը պատասխանէ Սերվիչէն: Ու կը բացատրէ թէ զինուորական ատենին զոյւթիւնը օրէնքի ջնջում չի նշանակեր: Յանցանքի մը համար սովորական ժամանակ ինչ պատիժ որ պիտի տրուի՝ պաշարումի վիճակի ատենն ալ նոյն պատիժը կը տրուի, միայն թէ պատական ձեւակերպութիւնները կը կարճան. գատաստանը կը անհնաւի առանց երկար բարակ խաղաղսիրութիւններու եւ երկարաձիգ ճառերու: Ատանկ ալ «Մանգումէ» ինչ պատիժ որ պիտի կրէր պաշարումի վիճակ չեղած ատեն, հիմա ալ ո՛չ աւելի ո՛չ պակաս պէտք է կրէ, եթէ յանցաւոր է. միայն թէ յանցաւոր ըլլալը կամ չըլլալը կէս ժամուան մէջ կ'որոշուի:

- Իրաւ կ'ըսես, Սերվիչէն էֆէնտի, կը հարցնէ ըստ պարագայեար ապշած, զարմացած:
- Իրաւ կ'ըսեմ:
- Էհ, անանկ է նէ թող ատանի ըլլայ, կ'աւելցնէ Բէտիֆ փաշա ահագին բրբեջով մը:
- Չըմբռնը «անյիշատակ ժամանակներ»: Եւ փանսգեան կը մնայ ազատ ու թերթը կը գատապարտուի երեք ամսուան խափանումի: Աման ազատած էր:
- Ռարխարար լուրը անուշիկն բիչ մը ետքը փանոսեան երբ Պապը—Ալի ճատաւէն կը վերադառնար, կը տեսնէ Սերվիչէնն որ կ'անցէր փողոցին միւս կողմէն. առջեւը կ'երթայ, ճամբան կը կարէ եւ գեանէն բարեկեղծ խօրին շնորհակալութիւն կ'ուզէ յայտնել:

—Հա՛ կորսուէ սրանգէն, կը սրտայ Սերվիչէն արհամարհանքով. ինչ, միաբոյ գրիր որ ես քեզի՞ համար քացի միջամտեցի, քու թերթի՞դ համար խօսեցայ. ես մամուլի ազատութիւնը պաշտպանեցի, մամուլին իրաւունքները սեղցի ապահովել:—Ու այս ըսելով ճամբան կը շարունակէ:

Փանոսեան ամօթահար ետ կը դանսայ. իր թերթը լիբր, անպատկառ, անխիղճ, անամօթ զրպարտիչ մը եւ զած էր Սերվիչէնի նկատմամբ Հիւանդանոցի խնդիրներուն մէջ —ինչպէս ամէնուն ալ ամէն խնդրի մէջ:

Մամուլի ազատութիւն. Սերվիչէնի հանրային կեանքի նշանաբանը թերեւս այդ երկու բառնն մէջ աւելի յըստակօրէն ամփոփուի քան ուրիշ ո՛ր եւ բացատրութիւնով: Իշխանական մարդ, ամուր պատակով մը կը կառավարէր Պատրիարքարանն ու Աղգային փողովը ամէն ատեն որ պաշտօնի կը հրաւիրուէր. եւ սակայն օր մը երբ պատրիարքարանի շրջանակները մտաբերեցին Դրան գիմելով խնդրել ազգային գործերու քննադատութեան մէջ հայ մամուլին ազատութեան չափաւորումը, Սերվիչէն անընկճելի արայեան երեցաւ ընդգէմ այն կարծատեսներուն որ այս մեղապարտ գաղափարը կը յայտնէին, ու իր «բռնապետութեամբը» քանդեց այդ ոճրագործական ձեռնարկը: Ան որ սրտանց կը սիրէ իր ազգը, ու փողովուրդը շահագործելու համար չէ որ կը մասնակցի հանրային կեանքին, ու իր մտաւոր կարողութեանն ալ ճիշտ գիտակցութիւնը ունի, ա՛ն երբեք չի վախնար մամուլի ազատութեան: Կրօնիակ ապառաժն է, հեղեղները կուգան կ'անցնին վրայէն ու ինք կը մնայ միշտ ասրակուտ, պայծառ: Պզտիկ պետականները որ Սերվիչէնէն ետքը կառավարեցին ազգը եթէ անոր պէս հեռատես եղած ըլլային —բայց հեռատեսութեան համար պէտք է որ շահամուլութիւնը չմթաղնէ աչքի յըստակութիւնը—, տարակոյս չի կայ թէ գնտակ մը չէր երթար գեանգուլի Մագսուտ Սիմոն պէյի մը կողքը: Երբ

կը զգորի մամուլին ազատութիւնը, կը սկսի վեցհարուած հանին ազատութիւնը:

Սերվիլէնի կենսագրութիւնը անգամ մը եւս կը հաստատէ թէ երբ մտքի ուժը միանալով սրտի մեծութեան կը ստեղծեն հզոր նկարագիրները, բռնապետութիւնն իսկ կը պատկառի անոնցմէ, նաեւ հայոց մէջ ալ. ո՞վ ստրէն կ'անցընէ թէ Դուռը կրնար ազգային դաւաճանութեան առաջարկ մը ներկայացնել Սերվիլէնի մը կամ Օտեանի մը:

Այդ «զպրոցէն» չէ՞ր եւ Միքայէլ փորձուգալ որ փաշայութեան սեւ թղթով տակ կը պահէր կարմիր սիրտ մը, Ալիշանի հրակայլակ շունչով տաքցած Բարիզ Մուրատեան վարժարանէն: Ու ինքն ալ Կ. Պոլսոյ կաթողիկէ հայ հասարակութեան համար եղաւ այն ինչ որ Ալիշան իր վանքին, պատկառանք մը՝ որուն ամէն մէկ խօսքը պատգամ մըն է, վասն զի սէրն է իրենց ներշնչարանը:

Կաթողիկէ մը Միքայէլ փորձուգալ, սակայն չէր կրնար կրօնական կուսակցութեան մը նեղ շրջանակին մէջ բանտարկուած մնալ: Պղտիկ մտքերն են որ կուսակցական կոյր մտնանդութեան մէջ միայն, կրօնական ըլլայ թէ քաղաքական, իրենց մեծութիւնը ապահովուած կը համարին: Փորձուգալ Միքայէլ պիտի ճաթէր կրօնական կուսակցութեան մը անձուկ օղակին մէջ: Ամբողջապէս հայ էր, եւ այն հայերէն որոնք հպարտութեան զգացումը կը ներշնչեն ցեղի մը. ու հպարտութիւնը եթէ անհատներու համար մահացու մեղքերու գլուխ-գործոցն է, ժողովուրդներու համար թերեւս առաքինութիւններու գերագոյնը ըլլայ, վասն զի ուժ մըն է: Միքայէլ փորձուգալ կը սիրէր հայութիւնը, ամբողջ հայութիւնը, հինն ալ նորն ալ, լուսաւորչականն ալ, աւետարանականն ալ, կաթողիկէն ալ: Ու կը սիրէր գործնական միջոցներով: Ահա պատմութիւն մը:

Քանի՞ հայ արդեօք գիտեն թէ Կ. Պոլսոյ Բերայի մէջ Նարեկեան զպրոցին տեղը կանգնուած «Էսաբան» անուանակիր վարժարանը պարզապէս Միքայէլ փորձուգալի անուղղակի նուիրատուութեան արդիւնքն է:

Տասը տարի առաջ էր, որքան կը յիշեմ, որ Ղալաթիոյ Մէհմէտ Ալի փաշա խանի հայ սեղանաւորները, բացի մէկէն, Ներսէսեանը, ծուղակի մը մէջ ինկան: Պուլկար տաղի հանքերու գործի մը մէջ բռնուեցան, ամենուն կորուսան ալ մեծ էր, ու ոմանց անանկութիւնը անխուսափելի: Մէհմէտ Ալի փաշա խանի սանտուղներուն վրայ Էսաբան Յովհաննէս կը պոռար թէ իր ձեռքը ունեցած 75,000 ոսկիի թուղթերը պատրաստ է 40,000 ոսկիի ծախել: Կացութիւնը յուսահատական էր: Թիւրքիոյ մէջ ամէն ատեն ամէն վիճակ յուսահատական է, բայց ամէն ատեն ալ յուսալիր: Երկիրն է ուր շես գիտեր թէ արեւը իրիկունը ո՞ր տեղէն կրնայ մտնել, առտուն ո՞ր կից կրնայ ծափել: Ելնտական նախարարութեան խորհրդականը ան ատեն Միքայէլ փորձուգալն էր. կը յաջողի ընել անանկ կարգադրութիւն մը որով առանց պետական շահերուն վնասելու կը փրկէ հայ գրամատերներն ալ: Մեծ բաժնեւէրը Էսաբաններն էին. այն 35,000 ոսկիէն զուր սիրայօժար պիտի կորսնցնէին մնացածը փրկելու համար, բաժին մըն ալ Միքայէլ փորձուգալի հանելու պատրաստ

տականութիւն յայտնեցին: Անոր կոկորդը սակայն կրծօն սարսիլու յարմար չէր ստեղծուած. բայց կը զգար թէ անկրատութիւն ըլլար թերեւս այդքան մեծկտի գումար մը շահեցնել առանց գոնէ Բարիքին բաժինը հանելու:

— Ազգին զպրոց մը շինեցէք, ըսաւ:

Միքայէլ փորձուգալի կրծօնը այս էր ահա: Տուժողը սակայն խեղճ Նարեկացին եղաւ, զպրոցին ճակատէն իր պաշտօնանկութեամբը:

Այդ պաշտօնանկութեան արդեօք պիտի կրնամք հանդուրժել «անուղղակի բարերարը» եթէ Բերայի վարժարանը Եղիշէի հովանաւորութեանը ապաստանած ըլլար փոխանակ Նարեկացիին: Հայ սրտերու վառվառ պատմագրին կաթողիկէ սիրող մը՝ այդ ախրասիրտ փաշան, որուն հոգին երբ անշատուէր օրուան տափակութիւններէն, հնութեան յիշատակներէն կը խնդրէր իտէականին գոհացումը:

Սրտին հետ Միքայէլ փորձուգալ միտքն ալ նուիրեց Եղիշէին որուն քննիչն ու մեկնաբանը եղաւ իր պատմական ու լեզուագիտական ընդարձակ հմտութիւնովը: Քաղտնածածուկ քննիչ ու մեկնաբան սակայն, «մարդ չիմանայ» օրուան կարգախօսին հպատակ: Ամէն ատեն որ հետագօտել ուզուի որոշեալ ժամանակի մը թիւրքերուն հոգեկան ձգտումը, պէտք է նաեւ հարցնել.

— Այդ ժամանակ քրիստոնեան իր ո՞ր առաւելութիւնը կը ջանար սքօղել իսլամէն:

Ատեն մը հայուն համար օրուան անխոհեմութիւնը իր ոսկիին շլացուցիչ ցուցադրութիւնն էր: Խասգեղի խորհրդը կը թագցնէին ամիրաները իրենց բնակարանը, Տաճկին աչքէն հեռու, հեռու. հիմա Պոլիս Բերայի մեծ փողոցին վրայ հայը իր ապարանքները աներկիւղ կը տողաշարէ: Երբեմն ճարտարապետ Պալեանը, կամ ինչպէս կ'ըսէին Խալֆա ամիրան, Սուլթան Մէհմետի սիրելին, արքունական պալատը միշտ պատրաստի ունէր իւզոտ, հնկէկ սէթրի մը զոր շուտ կը հափնէր սուլթանէն կանչուած բոպէին. այժմ Միքայէլ փաշա կրնար մաքուր նոր զգեստով մը ներկայանալ սուլթան Համիտին առանց ո՞ր եւ է անպատեհութեան: Հիմա աչքերը Հայուն սրտին վրայ են յառած. ա՛ն պէտք է ծածուկ պահել:

Եւ ո՞վ թիւրքիոյ մէջ իր սիրտը աւելի թանձր քօղարկելու հարկադրեալ էր քան Եղիշէի վրայ կիանք մաշկնող այդ պաշտօնական անձնաւորութիւնը: Մեր յեղափոխական առաջին գրգռիչը թերեւս եղաւ ա՛ն որ առաջին անգամ Եղիշէն տպագրեց: Փառքի դարերու նիրհած արձագանգը արթնցուց հայուն սրտին մէջ, միշտ պատանեակ այդ սրտին մէջ, վարդանանց բամբուկաբուր: Ստորուկ ժողովրդին համար խոհեմութեան մեծագոյն թշնամին ազնուական զգացումներու յանկարծական զարթումն է: Ու սուլթանին անձնական գանձուն նախարարը իր անձնական գանձը, այդ Եղիշէի մեկնաբանութիւնը, վստահեցաւ Միքայէլ փորձուգալի արտաբանութեանը. Ս. Ղազարու մկնատանը անգամ մը եւս մեր հալածեալ մատենագրութեան ապաստանարանը կը գանձար:

Պիտի գան լաւագոյն օրերը մեզի համար, ուղտ ու

տեն պիտի երեւնայ Փորձուգալեանի Եղիշէի մեկնաբանութիւնը, 19րդ դարուն հայ պատմութեան ու գրականութեան թողած փառքի յիշատակարաններէն մէկը: Այդ հաւատքով չմեկնեցաւ արդեօք Փորձուգալ Միքայէլ, մահուան պահուն զգալով գերագոյն սփոփանք մը. հետք մը կը թողուր աշխարհէն իր անցքէն. ամբօխին մէկ կողորակը չէր եղած:

Հետք մը ձգած ըլլալու միտարարնքէն կարծես զըրկուած մեռաւ խեղճ Ճանօն, բայց իր գերեզմանին շուրջը զգածեալ կը գեղերի օրագրողը, աւելի զգածեալ թերեւս բան Սերվիչէնի մը, Փորձուգալի մը շիրիմներուն բալորտիքը: Վասն զի այդ գերեզմանը ո՛չ մէկ կարօտը առած, ո՛չ մէկ փափաքին հասած, հայրենիքի իտեականին երազուն նահատակի մը սրբութեան մասնատուին է, ամբողջ մարտիրոս երիտասարդութեան մը ամփոփումը:

Հետք մը կը թողու սակայն Ճանօն մեղի համար, «Հրոսակի մը Յիշատակարան»ին մէջ, զոր Փոքր-Հայքի Ոսկի-Մատենիկը կարելի է անուանել: Միտ կ'առնէ զայն կարգացող հայը, վասն զի կը զգայ թէ «ամէն ինչ կորսուեր է բացի պատուէն»: Երիտասարդներ են, զրեթէ պատանիներ, որ օր մը կը թողուն ընտանիք, հանգիստ, նիւթական վայելում, եւ ամենուն տեղ հրացանը կը նետեն ուսերնին, վասն զի «մամը հնչած է»: Փոքրիկ խումբը կը կուռի հայրենի ազատութեան համար, մինչեւ որ բիրտ թիւր ցիրուցան կ'ընէ ամենքն ալ, ոմանք գաշտին վրայ ինկած, ոմանք բանտբու մէջ, ուրիշներ թափառայած վտարանդիներ:

Արմատանի սրտոտ, կրակոտ քաջարի երիտասարդներու պարագլուխներէն էր Ճանօն: Այդ սլացիկ, «ճին»ի գրաւիչ գաղափարը երեսակայութեան մէջ արթնցնող անունը օր մը փոխանակուած էր «մեծաշուք ախողոսի» մը հետ. լուրջ մարդ էր դարձած Ճանօն՝ ժողովրդի կըթիչ, ու կը մեծարուէր իբր «պատուելի»: Այդ հրացանակիր պատուելին չի՛ր յիշեցներ Պէշիկթաշեանի երգած տէրտէրը.

Զինուոր Հայոց եւ Աստուծոյ.

Ու իր տարադրութեանը մէջ այդ տիտղոսով ճանչցունեցաւ ամենէն Ճանօն, Նշան Քէշիշեանը: Պատուելին էր:

— Բուրգերը եթէ չես ուզեր տեսնել, հող չէ, սովորական բաներ են անոնք. բայց պատուելին տեսիր, ըսաւ ինծի խանդաղատանքի ժպիտով մը սկեպտիկ բարեկամս, երբ վերջի սեպտեմբերին Աղեքսանդրիա գալով անկէ Գահիրէ պիտի երթայի:

— Առանց պատուելին տեսնելու չըլլայ թէ ետ պտնաս, ըսաւ ուրիշ մէկ բարեկամս որ իբր պիտուն մարդ մեծ սիրահար մը ըլլալու չէր պատուելիներու, բայց «պատուելիին» անունը զուրգուրանքով կ'արտասանէր:

Թէեւ ամէնուն բերանն էր այդ անունը, սակայն համակրանքի ընդհանուր արտայայտութեան մէջ, աս երկու բարեկամներուս ջերմ յանձնարարականները հզօրապէս ազդեցին վրաս. ո՛չ մէկը «պաշտօնապէս յեղափոխական» արձանագրուած էր, ո՛չ միւսը. «պատուելիներու» համար

մէկէն հեղնութիւն, միւսէն անտարբերութիւն միայն կարելի էր սպասել:

— Ի՛նչ սիրասիր մարդ ըլլալու է այդ պատուելիինդ որ ձեզի պէս ցուրտ մտքերն անգամն իրեն կը քաշէ, ըսի:

— Գնա՛, կը տեսնես:

Տեսայ: Իրաւցնէ եզական տիպար մը. . . համեստ էր: Հերոսութեան առեւտուրի այս ոսկեգարուն մէջ երեսակայութեանը մէկ խորշիկէն իսկ չէր անցըներ ներկայանալ՝

— Որ Մենք հերոս, ըսելով:

Իր հիւանդ զաւիին տարած խնամքներուն փոխարինութիւնը գրացիներէն պահանջող մայրը կը սիրուի: Իր անձնուրութիւնը գրամազուլի նկատող մօրմէն աւելի ս'իջ զղուելի: Այդ մօրուն չէր պատուելին. անխօսուկ ինքնազոհ մայրն էր, ամէն բան կ'ընդունցած առանց ցաւելու, ցաւերուն էն մեծէն իր սիրտը խոցուած, — ժողովրդին ցաւը: Անոր բուժումը փնտոց Յեղափոխութեան մէջ սրուն անողորմելի պահանջումն է, որպէս զի յաղթանակը յուսադրէ, ամէն բանէ առաջ զոհողութիւն, առանց հատուցումի ակնդէս զոհողութիւն: Յեղափոխութիւնը պատուելիին համար կրկնատուամար մը չեղաւ, «Հայրենասիրութեան Ընդհանուր Ապրանք»ի Շահ ու Զէնի գլխով մը:

Համեստութեան կարօտը կը քաշէ հայ ժողովուրդը, վասն զի իր ծանր հիւանդութեանը մէջ զինքը սրտանց սիրողներ կը փնտռէ, ու կը զգայ թէ սէրը պարծենկոտ չըլլար. պարծենկոտը ետամոն է: Վասնզաւոր չէ՛ բժիշկը երբ ինք վարակուած է բարոյական հիւանդութիւններու էն գէշովը — ինքնասիրութիւնը: Այդ հիւանդ հայը կը սիրէ պատուելիներուն նմանները. գթութեամբ լեզուն անոնց տիւր նայուածքին մէջ կը ցլանայ ինքնամոռացութիւնը. հիւանդին միայն կը մտածեն:

Սկեպտիկն ու գիտնականն ալ զորովալիս սիրով սիրեցին պատուելին: Կը կարծէք թէ «մտաւորները» իրենց զրսի անտարբերութեանը մէջ չեն տանջուիր ազգին մարտիրոսութիւններուն ի տես: Զէ՛. անոնց կսկիծները պարզ զգայնիկին ցաւերէն աւելի տառապեցնող են, ինչպէս ուժեղը փափկակազմէն աւելի կը նեղուի հիւանդութեան մը պահուն: Անոր համար է որ մտաւորներն ալ մանկունակ ցնծութեամբ կը ծափեն կը ծափփին երբ հանդիպին բարոյական առողջութիւն բուրդը բժիշկներու. ու ամէն առողջութեան մայրը համեստութիւնն է:

Պատուելիին գերեզմանն ալ առողջութիւն պիտի բուրէ, ու ան ալ ներշնչարան մը պիտի ըլլայ իր պարզ տապանագրովը.

ՀՈՍ ԿԸ ՀԱՆԳՁԻ ՃԵՄՍՐԻՏ ԱՆՁՆՈՒԷՐ ՀԱՅ ՄԸ ՎՍՆ ԶԻ ՀԱՄԵՍՏ ԵՂԱՒ:

Նահատակի այդ ներշնչարանն ս'ւր էր թէ հիւլէ մըն ալ հովերէն քշուած երթար ինյար Վոսփօր պատրիարքաբանի խորհրդասենեակը, «ամօթ» մը ժայթքէր սեւ վեղարներուն վրայ, ու անկէ հայ աշխարհը թափառայած, մծտենալով Արմաշեան աբեղաներու սրտին — նիւթականը գոնէ պակսելու չէ անոնց — տխրածայն մրմնջէր.

— Դո՛ւք ալ «խալբախի» կոխ: Հիւսկոյց: Հայրենիքի համար մարտիրոսներու կտրուած գլխին թագը քար

մը միայն եղաւ: Թիւրքին գունտ-թակը բոպէ բոպէ հայսն պիտուն կ'իջնէ. այդ թակէն հոսած արիւնին մէջ ներկուած կարմիր շաթալ-թափը կը փնտռէր զուր: Հայր սուրբեր, չար սուրբեր:

Պոլսոյ պատրիարքարանը, ամբողջ հայ եկեղեցակա- նութիւնը մեծ տաքնապ մը կ'անցընեն. հայութեան հա- մար մահու եւ կեանքի մեծ խնդիր մը կը յուզուի: Հայաս- տան վաղոզ արիւնքն ինչպէր, կուտակուող գիտելիքն զարմանը, գեղազէ գեղեցիկներուն համար: — Ի՛հ, սնչու- թիւններ այդ ամէնը: Հոգը կը ծծէ արիւնը, արեւը զայն կը չորցնէ, վաղը՝ եւ ա՛յ նշան չի մնար: Ագուստը կը լափէ զիսկը, եւ սակարը արախն պարտաւ հունձը կը պարգեւէ: Հեղեղը կը քէ կը տանի քարը, փլատակը. հետքերը կը ջնջուին: Մահու եւ կեանքի մտածուքը, — Արմաշեան արեղաներուն թագաւորութեան խնդիրն է, հայ ազգին խաչակրութեանը հանգէպ:

Հաւիթիքն զեռ նոր զուրս ելած այդ վառակները, մէյմէկ սոնքացոյց հնգիւհաւեր, պարտիկ պարտիկ զլու- ներնուն եւ ուսած իրաններնուն միջեւ հաստարակչու- թիւն հաստատելու համար շաթալ-թափին ծանրութիւնը կը պահանջեն: Ու ահա շաթալ-թափեան եւ հակա-շաթալ- թափեան կուտակուածութիւնները կը ծնին: Իրաւունք սնոյն այդ արեղաները, իբր առաջնորդական տեղապահ, ազգին ո՛ր եւ է ծառայութենէ զեռ թափուր իրենց գրմագրաթմեն- ըուն վրայ հանգչեցնելու խորթեանի, վարժապետեանի, իզմիրլեանի: շաթալ-թափերը: — Այո՛: — Ո՛չ: — Ո՛չ: — Այո՛: Եւ ահա կուի, վէճ, հրատարականներ, յուզում, իրարանցում. մամուլ, ժողովուրդ ամէնքը մէկմէկու կ'իյ- նան:

Հայաստանի հայը ունի առած մը որ գուցէ հայ խելքին միջինը կը սահմանէ. « Զուրն է տարեր ջաղացքը, մենք կը փնտռենք ջախջախը: » Զրսե՞նք. Թիւրքն է տարեր հա- յուն զլուսը, մենք կը փնտռենք շաթալ-թափը:

Զէ՛, հայր սուրբեր, զուր չար սուրբեր չէք. պարզա- պէս ապուշներ էք, չարէն վատթարագոյն. չարը կրնայ հաշուով սիրտ ունենալ. ապուշը անպարմանելի անսիրտն է, մօրուց անսիրտը:

ՀՐԱԶԴԱՆ

Ժ Ա Մ Ա Ն 8

ՕՐ Հ Ն Ե Ա Ն Գ Ե Ր Դ Ա Ս Տ Ա Ն Ը

Քառորդ զար մը առաջ Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը.

« Հանգուցեալ Կարապետ ԼՔէնտի Գարակէօզեան « 40,000 ոսկի կտակած էր Կ. Պոլիս Գարակէօզեան « առեւտրական վարժարանի մը հաստատութեանը համար: « Հանգուցեալին ընտանիքին եւ Ազգային Պատրիարքա- « րանին միջեւ սոյն կտակին վերաբերեալ պաշտօնական « գործողութիւնները կատարուած վերջացած ըլլալով, « Ազգային ժողովը իր երէկուան նստին մէջ, որուն ան- « ձամբ կը նախագահէր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայ- « րը, յոտնկայս օրհնեց վաղամեռի բարերարին յիշա- « տակը, ու երախտագիտութեան քուէ տուաւ հասայն « Գարակէօզեան ազգասէր տոհմին: — Օրհնեալ գեր- « վաստան: »

* *

Քառորդ զար մը վերջ, 1896ին, Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը.

« Պաշտօնապէս Ամեն. Ս. Պատրիարք Հօր յանձնուած « ըլլալով հանգուցեալ Տիգրան ԼՔէնտի Գարակէօզեանի « կտակը որով իր հարստութեան մէկ երրորդը ազգին կը « թողու Կ. Պոլիս Գարակէօզեան առեւտրական վարժա- « րանի մը հաստատութեանը համար, Ազգային վարչու- « թեան խոսն ժողովը երէկուան նստին մէջ, որուն ան- « ձամբ կը նախագահէր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայ- « րը, յոտնկայս օրհնեց վաղամեռի բարերարին յիշա- « տակը, ու երախտագիտութեան քուէ տուաւ համայն « Գարակէօզեան տոհմասէր ընտանիքին: — Օրհնեալ « գերզաստան: »

* *

Քառորդ զար մը վերջ, 1921ին, Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը.

« Պաշտօնապէս Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր « յանձնուած ըլլալով հանգուցեալ Գրիգոր ԼՔէնտի Գա- « րակէօզեանի կտակը որով իր հարստութեան մէկ եր- « րորդը ազգին կը թողու Կ. Պոլիս Գարակէօզեան առեւ- « տրական վարժարանի մը հաստատութեանը համար, Ազ- « գային ժողովը իր երէկուան նստին մէջ, որուն անձամբ « կը նախագահէր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, « յոտնկայս օրհնեց ծերունագարդ բարերարին յիշատակը, « ու երախտագիտութեան քուէ տուաւ համայն Գարակէօզ- « եան ազգասէր տոհմին: — Օրհնեալ գերզաստան: »

* *

Հայաստանի մայրաքաղաք Հնչակապատի 2001 ի թերթերուն մէջ կը կարգանք հետեւեալը.

« Հայկական Հանրապետութիւնը իբր առաջին տարե- « վարձը կը տօնէ հոյակապ նուիրատուութեամբ մը:

« Ամիս մը առաջ վախճանեցաւ ծերունի վաճառական « Պ. Կարապետ Գարակէօզեան, թոռան թոռնորդի 12՝ « տարի առաջ Չարիկրատ (*) մեծած Կարապետ Գարա- « կէօզեան վաճառականին: Հանգուցեալը իր հարստու- « թեան մէկ երրորդը — մէկ միլիոն ոսկի սկսու հայկա- « կան — կտակած է Հնչակապատի մէջ առեւտրական « վարժարանի մը հաստատութեանը: Սրբոյն Մատթէի- « իզմիրլեանի Մայր եկեղեցիին մէջ երէկ հանգիստուր « պաշտօն եւ պատարագ մատուցուեցաւ հանգուցեալին « հոգուն: Պատարագիչ սրբազան հայրը զգածեալ շիշտե- « ըով օրհնեց յիշատակը բարերարին եւ համայն Գարա- « կէօզեան ազգասէր տոհմին: — Օրհնեալ գերզաստան: »

— Անկողմնակալութիւնը կը պարտաւորէ մեզի արտա- տպել նաեւ ազատական կուսակցութեան զլուսար բերանը եղող « Ազատ Հայրենիք » ի հետեւեալ հատուածը.

« Կղերական թերթերը ծանուցին Հայոց եկեղեցիին « բուն մէջ « Օրհնեալ գերզաստան » հին զաւեշտախաղի « մը չենք գիտեր քանի՛ն ըրդ ներկայացուած: Այդ խաղը « երբ մեր անցեալ սարկութեան օրերու արձագանգը կը « բերէ մեզի, իր յարատեւ կրկնութեամբը կը հաստա- « տէ նաեւ թէ ժողովուրդ մը կրնայ աւելի զիրաւ ազա- « տիլ քաղաքական գերութենէն քան բարոյական սուրբ- « կութենէ: Թիւրքերը հին աստե իրենց քիմքին յարմար

(*) Նախկին Կ. Պոլիս. Ծ. Խ.

«խաղ մը ունին եղեր — մեր ծերերը ազօտ իմն կը յի-
 «շեն — «Գարակէօզ» կոչուած, կեղտոտ բարքերու կա-
 «տարկադործեալ տիպարը. մենք Հայերս ալ ունեցած
 «ենք մեր Գարակէօզի խաղը, տարբերութեամբ մը սա-
 «կայն. իսլամները երբեք չեն մտաբերած իրենց մզկիթ-
 «ներուն մէջ ներկայացնել այդ գաւեշտը Մահմէտի հո-
 «ւանդին տակ, մուլաներուն աղօթքովը. իսկ Հայերը ի-
 «րենց օրբութեանը նախորդած տաճարին մէջ, իրենց Բը-
 «րիստոսին աչքին առջեւ, եպիսկոպոսական օրհնութիւն-
 «ներով կը ներկայացնեն ստութեան, կեղծաւորութեան,
 «խարդախութեան հրաշալի գլուխ գործոց «Գարակէօզ»
 «գաւեշտը:

«Այդ կեղտոտ գաւեշտին նիւթը ամիսփենք երկու
 «բառով: Ասկէ 12Յ տարի առաջ Չարիկրատ մեռած մի
 «ոմն Կարապետ Գարակէօզեան գումար մը կը կտակէ
 «առեւտրական վարժարանի մը շինութեանը. շտեմ հայ
 «հասարակութիւնը անմիջապէս մաղթանքներով ազգային
 «բարերար կը հռչակէ Կարապետ Գարակէօզեանը եւ ըն-
 «տանիքը, չյիշելով գոնէ աղջային առածը՝ «Կեր ու ապա
 «դոհացիր»: Տարիներ կ'անցնին առանց սակայն վարժա-
 «րանին նշոյլը նշմարուելու. բայց ձրիաբար անմահ բա-
 «րերար եւ իրենց ընտանիքն ալ «օրհնեալ գերդաստան»
 «կոչել տալու համը ամէն Գարակէօզեանի բերանը մնա-
 «ցած ըլլալով, ամէն Գարակէօզեան իր սնտուկին մէջ
 «պատրաստ կտակ մը թնի որ իր մեռած օրը երեւան
 «կուղայ. մեռնողը ապահով է թէ իր կտակը պիտի չի գոր-
 «ծագրուի, ու ինքն ալ «անմահ բարերար»ի տիտղոսը
 «պիտի վայելէ: Խաղը կը շարունակուի 12Յ տարիէ
 «ի վեր եւ պիտի շարունակուի, վասն զի Գարակէօզեան
 «ճեան ալ կը շարունակուի: Եւ ահա այսպէս այդ Գարա-
 «կէօզեանները առանց լուսն մը ծախսելու ձրիաբար «օրհ-
 «նեալ գերդաստան», «անմահ բարերար»ի տիտղոս-
 «ները ժառանգական ըրած են իրենց համար, առանց
 «ազգին ժառանգութիւն մը ձգելու: Բայց կ'անդրադառ-
 «նանք թէ պիտի կարծուի որ սխալ մը ըրած ըլլալու
 «ենք «ձրիաբար» բացատրութիւնը գործածելով:— «Հա-
 «պա թո՛ղ թը, մեղանը, գրի՛ ըր, կտակները գրելու համար,
 «ատոնք ստակով չեն», պիտի հարցուի:

«Փութանք ո եւ է սխալ հասկացողութիւն շտկել: Կայ
 «աւանդութիւն մը, որ հաստատուեցաւ նաեւ նորոգ մեռ-
 «նող Կարապետ Գարակէօզեանի գործովն ալ, թէ ամէն
 «կտակարար Գարակէօզեան իրենց թաղին եկեղեցին եր-
 «թալով թերթ մը թուղթ, գրիչ եւ մելան կ'ուզեն եղեր
 «կտակը անոնցմով պատրաստելու՝ — Ազգին բարիք պի-
 «տի ընենք, ծախքը քսնէ աղըը հոգալու է, ըսելով: Ու
 «միանգամայն եկեղեցիին աթոռներուն վրայ նստած կը
 «գրեն կտակին, իրենց տան աթոռները նուազ մաշեցնե-
 «լու հոգածութեամբ: Պատճառ մը չունինք աարակուսե-
 «լու այս տեղեկութեան ստուգութեանը:

«Հանրային կրթութեան պաշտօնատունը որ կտա-
 «կին օրինաւոր աէրն է, եթէ յաջողի անկախ Հայաստա-
 «նի մէջ գործադրել տալ այս վերջին կտակը, ա՛լ անկէ
 «եաքը իրենց նշանակութիւնը պէտք է կորսնցնեն սերուն-
 «դէ սերունդ սոցիալիզմի բերանը պարտած առածներ որոնք
 «գործողութեան մը անհնարութիւնը կը պատկերացնեն, օ-
 «րինակի համար կ'ըսեն՝ «Երբ ձուկը ծառը ելլէ»: Գարա-
 «կէօզեան կտակը ե՛թէ գործադրուի, ձուկին ծառը ելլելը՝
 «թոչունին ծառը թառելուն պէս բնական գործողութիւն
 «մը պիտի համարուի անկէ ետքը:»

* * *

Ահեղ օրը. տիեզերք տակնուվրայ. վերջին դատաս-
 տանը կը կատարուի Յովսափաթու Չորին սէջ, որ Հայր
 Աստուած Գահը բազմած, աջ կողմը Որդին, ձախը Հո-
 գին, կը գատէ մարգիկեղէն արարածները «ի սկզբանէ աշ-
 խարհի ցկատարած»: Առաջին բարտուղար Ռափայէ կը
 կարգայ կենաց-Գարութեան Մայր Տուսարը որուն առա-
 ջին գլուխը Հայոց ազգինն է, Հայերը ըլլալով ուղղակի
 շառաւիղ նախաստեղծ մարդուն. (Ագամէն-Նոյ, Նոյն-
 Հայկ, անկէ ալ շիփ շիտակ մենք): Կանչուած անունը
 յարութիւն կ'առնէ, կը ներկայանայ առեան, կը պատաս-
 խանէ եղած հարցումներուն, կը լսէ վճիռը: Երբ կը սկսի
 մեր այս տեղեկագրութիւնը, Ռափայէ հասած է Գ ին եւ
 կը ձայնէ.

— Գարակէօզեան կա...
 Սակայն անդրադառնալով որ այդ մականունը բանի
 մը հազար էլ գրուած է, եւ ամէնուն զիմացը իբր կեն-
 սագրական ծանօթութիւն «բարերար ազգին» արձանա-
 գրուած, լաւագոյն կը համարի բոլորը մէկէն կանչել
 լմնցնել. անանկ ալ ամենքը մէկտեղ արքայութիւն պիտի
 երթան անանկ ալ. ուստի կը գոչէ.
 — Գարակէօզեան ընտանիք:
 Անշարժութիւն մեռելաստան աշխարհին մէջ. Ռափա-
 յէ ապշած կը կրկնէ.

— Գարակէօզեան ընտանիք:
 Անշարժութիւն: Ռափայէ կը բարկանայ արձանադրիչ
 հրեշտակներուն. սխալ մը ըրած ըլլալու են:
 Այս միջոցին Գարբիէ կը վերադառնար կործանուած
 աշխարհէն, փողը թելին տակ, ձեռքն ալ թուղթ մը գոր
 խնդալով կը կարգար: Կործանուած յետոյ մէջ մը պտոյ-
 տի ելած էր. նախնի Եղեմէն, ուր դեռ օր մը առաջ Հայոց
 վերջին մայրաքաղաքը կար, փշրուած տպարանի մը աւե-
 բակներուն վրայ տեսաւ թուղթի թուղթի կառը մը, Տիե-
 ղերքի վերջին օրուան վերջին հայերէն օրաթերթին վեր-
 ջին լուրերը: Գարբիէ զայն վերցուց առաւ. «Ազգի կը
 «յիշեմ, ըսաւ ինքնիրեն, որ մարդուն ստեղծուելէն յե-
 «տոյ աս անցած տեղս իսկ իմացայ աշխարհիս առաջին
 «լուրը, օձին խաբեբայութիւնը. տեսնեք աշխարհիս վեր-
 «ջին լուրը ի՛նչ եղած է:» Ահա ինչ որ կարգաց.

«Պաշտօնապէս Ամեն Ս. Պատրիարք հօր յանձնուած
 «ըլլալով Կարապետ Օրհնեալգերդաստանեանին կտա-
 «կը, որով հանդուցեալը իր հարստութեան մէկ երրորդ
 «մասը ազգին կը թողու առեւտրական վարժարանի մը
 «հաստատութեանը հասար...»: Աւելորդ է շարունակու-
 «թիւնը արտաստպել. ուզողը կրնայ զայն գտնել 19րդ դա-
 «րու վերջին բառորդէն աշխարհիս մինչեւ վերջի օրուան
 հայերէն թերթերուն մէջ: Առաջ կը բերենք միայն հետեւ-
 եալ ծանօթագրութիւնը.

«Յիշեալ Կարապետը ե իր բոլոր ազգականները թէև
 «Օրհնեալգերդաստանեան կը կոչուին, սակայն վերջերս
 «հնազանդական խուզարկութիւններ հաստատեցին թէ ժա-
 «մանակաւ այս ընտանիքին մականունը Գարակէօզեան
 «եղած է. բայց յայտնի չէ թէ դարերու հոլովումին մէջ
 «սականունի փոփոխութիւնը ի՛նչպէս տեղի ունեցեր է:»

Երբ Գարբիէ պաշտօնակիցներուն ըով հասաւ, Ռա-
 փայէ հարցուց.

— Եղբայր Գաբօ, սըւոնց հողին դուն առած ես,
 յայտնի է, ամենքն ալ բարերար են. բայց արձանագրու-
 թեան մէջ սխալ մը եղած ըլլալու է. երկու անգամ կան-
 չեցի, ելլող չեղաւ:

— Սխալում չի կայ, պատասխանեց Գարբիէլ. Օրհնեալգերպատանեան ձայնէ և ամէնքն ալ կ'ըլլեն. ինչ ըլլալը վերջը կ'ըսեմ:

— Օրհնեալգերպատանեան ընտանիք, գոչեց Ռափայէլ:

Եւ ահա քանի մը միլիոն Գարաիէօզեան գլուխ, թեւ, մարմնի ամէն մասեր վեր կանգնելով իրարու մօտ եկան եւ յօրինեցին խեղճեան իրանները, ամէնուն ալ սակայն երկու ձեռքերուն հնգական մասները ամուրմը զսցուած:

— Ասոնք ամէնքն ալ Արքայութիւն, անանկ չէ, հարցոց Որդին ուրախութեամբ:

— Հրաման էք, Տէր, պատասխանեց Գարբիէլ, ամէնքն ալ ազդերնուն բարեբարները. օրհնեալ գերպատան:

Ու ահա յանկարծ շարժում չորս կողմէն. թապալտուքներ գերեզմաններու մէջ. բողոքի խեղճուկ ձայներ:

— Ի՞նչ է աս, ըսաւ Հայրը, բան մը ծածուկ կը պահուի ինէ. վրդովեալներ, ելք եկէք, տեսնեմ ի՞նչ է:

Եւ կմախքները վեր բարձրացան. յուսահատ դէմքեր: Գթառատ շեշտով մը Որդին հարցոց.

— Դուք անիրաւութեան զոհեր եղած ըլլալու էք. ինչո՞ւ սակայն այսքան անհամբեր: Ըսէք, ի՞նչ կ'ուզէք:

— Օ՛հ, Տէր արգարազատ, գոչեցին ձայներ, քննութիւն, քննութիւն:

Պատելով յօնքերը Հայրը կանչեց Գարբիէլը.

— Գարբիէլ, ի՞նչ է աս բողոքը. զո՞ւն առիբ Գարաիէօզեաններու հոգին. զո՞ւն «բարեբար» արձանագրել տուիր այդ անունները:

— Տէր, պատասխանեց Գարբիէլ, ամէն անգամ որ կը շրջէի հայ ժողովրդին մէջ հոգի ժողուելու պաշտօնովս, միշտ սկանչիս կը զարնէր «Գարաիէօզեան, բարեբար, օրհնեալ գերպատան» բացատրութիւնները իրարու ձուլուած: Տաճարներու մէջ այդ անունները կը փառաբանուէին, պատրիարքական կոնգրակներով. արդար մարդիկ կարծելով հոգիներն են առի:

— Հասկցայ, ըսաւ Հայրը, բնէ առաջ պատասխանատուութիւնը Պատրիարքներուն վրայ կը ծանրանայ. առանց անոնց հաւանութեանը ո՛չ եկեղեցիներս կը պղծուին խաբեբայութեամբ, ո՛չ ժողովուրդը ստուգութիւններու զոհ կ'երթայ: Որո՞նք էին Պատրիարքները:

Ռափայէլ, տետրակներէն ստուգելով,

— Առաջինս կտակարար կարապետ Գարաիէօզեան, ժամանակին Պատրիարքն ալ Ներսէս Վարժապետեան:

— Ներսէսը մեծաաւաններուն թիչ մը շատ երես կուտար, ըսաւ Հայրը. ասոնց ալ աչք գոցած ըլլալու է: Բայց ուրիշ աղէկ բաներ ալ ըրած է, անոնք դէմը կ'առնեն: Կանչելու պէտք չի կայ: Ետեւէն եկո՞ղը:

— Յաջորդ կտակարարը Տիգրան, Պատրիարք Մատթէոս:

— Կանչէ:

— Մատթէոս Պատրիարք Իզմիրեան:

Հանդարտ հանդարտ գլուխը գերեզմանէն հանելով Իզմիրեան կը յառաջանայ ծանրաբայլ. հրեշտակները պատկառանք կը զգան. Հայրն ալ ինքզինքը կը ժողուրտէ: Պատրիարքը յարգանքով կը բարեւէ Հայրը, Որդին, Հոգին, եւ կը կայնի:

— Մատթէոս, կը հարցնէ Հայրը, Գարաիէօզեանները քու պատրիարքութեանդ օրովն ալ խաբեբայ կտակ մը ըրած են. ի՞նչպէս օրհնեցիր զանոնք, եւ ազգին բարեբարները հոչակեցիր:

— Խառն ժողովին սրոշումը այս էր, կը պատասխանէ Իզմիրեան խոտօրէն:

— Որդիս փոխանորդը զո՞ւն էիր թէ Խառն ժողովը:

— Ե՛ս Սահմանադրութիւնը միայն կը ճանչնամ:

Հրեշտակները տեսնելով այս զիմազարձութիւնը կը փսփսան. «Գնա՛ց, գնա՛ց, գտիք գնաց:»

— Խղճից համար ինձի պատասխանատու ես:

— Ո՛չ. ես Սահմանադրութեան վրայ երբում ըրած եմ. պատրիարքական պաշտօնիս համար միայն Ազգային ժողովին պատասխանատու եմ, իսկ հաւատքի խնդիրներու մէջ ալ Հոգւոյն Սրբոյ. իրաւասութեան սահմանները ճշգրտեմ եմ:

— Ինձի նայէ, եղբայր, ըսաւ Հոգին Սուրբ, զիս մէջ մի խառնեք. քու պատրիարքական ընտրութեանդ ես չեմ խառնուած. ես աղանձի եմ, անուշ գէմքերը կը սիրեմ, քեզի պէս խոտաղէմ մարդը ինձի դուր չի գար: Ո՛չ առաքեալներուն, ո՛չ կաթողիկոսներուն, ո՛չ պապերուն մէջ նմանդ տեսայ:

Որդին Հօրը ծռելով կ'ըսէ.

— Հայր, եթէ կը հաճիս կարճ կապէ այս մարդուն հետ. փորձանք բան է. Համարը չի կրցաւ հետը գլուխ ելլել, մե՛նք պիտի ելլենք:

— Ես ասանկ մարդը կը սիրեմ, ըսաւ Հայր Աստուած, ժպտելով: Ասանկ համարձակ մարդիկը շիտակ կ'ըլլան. եթէ բոլոր կրօնաւորները ասոր նմանէին, աշխարհը այսպէս շուտ չէի վերջացներ. գտիքքի ալ պէտք չէր մնար:

— Ի՞նչ, կը հարցնէ Հոգին գունաթափ, միտքդ ասիկայ արքայութիւնը զրկել է:

— Հապա ի՞նչ պիտի ընէի:

— Գթութիւն, Հայր, անտեղի խեղճերուն. երանութիւններն թիւններն բերններուն պիտի գայ. սուրբեր կան, սրբուհիներ կան, թիչ մը անմեղ սիրաբանութիւններ պիտի ընեն, աս թող պիտի չի տայ:

— Ան առեն, գո՛ւրջ խրկեմ, կը հարցնէ Հայրը կատակի շեշտով:

— Աս ալ չըլլար, վրայ կը բերէ Որդին. անտեղի թշուառները իրենց պատուհասը արդէն չափազանցօրէն ունին. աս ալ վրանին մի՛ խրկեր:

— Կ'երեւի թէ, ըսաւ Հայրը մելամաղձօրէն, շիտակ մարդուն եթէ անգիտի աշխարհը տեղ չի կար, ասդին ալ տեղ պիտի չի գտնուի: Ինչ եւ է, ընելիքս գիտեմ. Սերորէ եւ Քերովբէ՛, առէք Իզմիրեան ծառատ եւ շիտակ արքայութիւն տարէք, առանձնոց մը զրէք, Իսկիւտարի երկինքին մօտ, կարօտը առնէ. իրեն ալ ընկեր տուէք Արժրունի Գրիգորը, ան ալ Մատթէոս պատրիարքի աշխարհականն էր. թող իրարու հետ նստին ելլեն:

— Ու իրարու ալ գլուխ պատան, ըսաւ Հոգին ժրջատուն, ամուսնալուծութեան վրայ վիճելով:

Սերովբէն առջեւէն, Քերովբէն ետեւէն Իզմիրեան կը մեկնի, գլուխը խոնարհեցնելով Հօր եւ Որդիին առջեւ, եւ շտեմնելու զարնելով Հոգին որ կը ծիծաղի.

— Վայ, քինախնդիր, կ'ըսէ:

Այս միջոցին նորէն Ռափայէլ շուարումի մէջ էր: Հայոց Եկեղեցական Պատմութեան մէջ արձանագրուած էր. «Յաջորդ Իզմիրեանի՝ Տեղապահ Բարթողիմէոս Արք. «Եպիսկոպոս»:» Եւ սակայն կենաց Գարուցեան Հայոց գլուխը այդպիսի անուն չունէր. Բ.ը կարգացուած ատեն Բարթողիմէոս կանչուած չէր. արդեօք աչքէն վրիպած էր: Նորէն անգամ մը նայեցաւ. չէ, չի կար:

— Ախ, սա Հայոց ձեռքէն քաշածս, կը հառաչէր

խեղճ Ռափայէլ: Համարը անոնց... Ինչ է նէ, քիչ մնաց մեղքը պիտի մանկի: — Ու Գարրիէլին երթալով,

— Գարօ, Բարթողիմէոսին անունը ի՞նչպէս արձա- նագրել տուեր ես:

— Բարթողիմէոսը սօ՛վ է:

— Արքեպիսկոպոս, Պատրիարքական տեղապահ:

— Ռափիկ, հոգիս, քեզի հազար անգամ չե՞մ ըսած որ եպիսկոպոսներուն հոգին աննշուռ ես չեմ երթար: Որպի՛ն մարմնանալն ի վեր հազիւ տասը եպիսկոպոսի հոգի առած եմ, անոնց ալ կէտը սխալուածով: Միքայէլին հարցուր:

— Միքէ, աղբարս, Իզմիրլեանին յաջորդող Բար- թողիմէոսին անունը ի՞նչպէս արձանագրել տուեր ես:

Միքայէլը ցուցամասը շրթունքներուն տանելով,

— Ռափիկ, աս գործը շատ մի՛ խառնեք, մեծաւորը չիմանայ, սխալմամբ Մահմէտականներուն տետրակը ար- ձանագրել տուի:

— Ի՞նչ, Մահմէտականներուն տետրակը մի՛...

— Ի՞նչ գիտնամ. բան մըն էր եղաւ: Հոգին բերած տտենս ճամբան շարունակ «եա՛ մէլէքիմ» ըսելով բաներ մը կը պատմէր. ես ալ շփոթեցայ, մոլլա դիտեցայ. ան օրն ալ շիտակը չափազանց յոգնած էի, առտուքնէ մինչև ի- րիկուն Համիտին հոգին քաշկոտեր էի, հազիւ կրցած էի հանել. երկուքը մէկտեղ կը բերէի, սատանաները վազե- լով եկան յափշտակեցին. ես ալ երկուքը մէկ տետրակ անցուցի:

— Հիմա՞:

— Աս իրարանցումին սօ՛վ բարակը պիտի փնտռէ. «Չամիչ Օղլուն» արձանագրել տուած եմ: «Օղլուն» կը- նես «եան», մահմէտականն ալ կըլլայ հայ քրիստոնեայ:

— Վա՛յ չարածն:

Երբ Իզմիրլեան կը մեկնի, Ռափայէլ կը կանչէ Բար- թողիմէոսը որ հեալով կը յառաջանայ, եւ կուզայ ամ- բողջ իրանովը երեսի վրայ կը փռուի Հօր ոտքերուն տակ ու երկու ձեռքերը միայն վեր բարձրացուցած կ'ազդակէ.

— Եւթեթլու, գուտրեթլու, մըհամթլու փաթի- շահըմ:

Միքայէլ կը վազէ կուզայ, կը բռնէ վեր կը հանէ Բարթողիմէոսը:

— Մա՛րգ, Համիտին առջեւ չես, Աստուծու առջեւն ես, անոր համեմատ իստէ:

— Եա Բապպիմ թէպլամ...

Հայր Աստուած ցասկոտ արհամարհանքով,

— Դուն հայերէն չե՞ս գիտեր:

— Գիտեմ գիտեմ:

— Ըսէ նայիմ ի՞նչ ըրիր Գարակէօղեան կտակին համար:

— Եա փատ... սյ, ... Եա՛րապ, վազթը վէմանտա վար ըսը հօզ ըտը...

Որպի՛ն խնդարով.

— Հայր, աս ցնդածը աղէկ կը ճանչնամ. օրը իրի- կուն պիտի ընէ առակ պատմելով. մէջէն ալ պիտի չելլէ. բան մըն ալ պիտի չի հասկնանք. նորէն գերեզմանը դար- ձուր: Իր կարգին թող դայ:

Բարթողիմէոս ետ կը խրիսի գերեզման.

— Հո՞ս ալ մի կէս ճամբան կը մնամ, կը հառաչէ:

Ռափայէլ կը կանչէ.

— Մաղաքիա կաթողիկոս Օրմ...

Ու դեռ բարը չամբողջացուցած Օրմանեան Հոփ-

սիմեանց վանքէն կտրիկ, զոռնալիկ կուզայ կը պտորի Հօր առջեւ, եւ ձեռքը երկնցնելով,

— Պոստուա, սէնետ:

— Աս ի՞նչ է, աս ալ ֆրանսացի՞ է, կ'ըսէ Հայրը խստութեամբ. Ռափայէլ, աս ի՞նչ սխալ է, հայ չե՞ս:

Օրմանեան անհամբեր,

— Մի՛, սի, հայ եմ, արմէնօ, եւ կաթողիկոս:

— Օրմանեան:

— Սիւնետէ:

— Հայերէն խօսէ նախ:

— Պէնէ, պէնօնէ. ա՛խ, լա՛ւ, լա՛ւ:

— Ի՞նչ ըրիր Գարակէօղեան կտակին համար:

— Հա՛, հա՛, հա՛, ձեռքերը շփելով շփշփելով, քա- ղաքապիտութեամբ վարուեցայ:

— Քաղաքապիտութիւնը ի՞նչ է Եկեղեցիին մէջ:

— Հա՛, հա՛, հա՛, բէն Տիօ, եկեղեցական փիլոնը քաղաքական վերաբերու է: Ազգին հաւատացուցի որ կտակը պիտի գործադրուի, սուլթանին հաւատացուցի որ կտակը չի գործադրուի, եւ կաթողիկոս եղայ: Ասոնք իմ գիտնա- լու գործերս են. քօքօ աի պաքքօ, հա՛, հա՛, հա՛:

— Եո հիմա գտիւքին մէջ քեզի կը սորվցնեմ թէ քաղաքականութիւնը ի՞նչ է:

— Չէ՛, Հայր, չէ՛, կը միջամտէ Որպի՛ն, հոն ալ սա- տանայապետին տեղը կ'անցնի, բոլոր սատանաները կը ժողլէ, մեղաւորները կը միացնէ, մեղի խաղ մը կը խաղայ:

— Հայր, կ'աղաչեմ ինձի տուր Օրմանեանը, ըսու Հոգին. ինձի կը յարմարի, խնդումբես է: Արքայու- թիւն կը տանիմ, անտեղիներուն ուրախ զուարթ ընկեր մը կ'ըլլայ, Ազարեանն ալ Իզմիրլեանին հետ հաշտեցնե- լու կ'ելլէ, ժամանակ է կ'անցնի:

— Քեզի ըլլայ, ուր կը տանիս տար:

— Կրացիէ թանթէ, Բատրէ, կրացիէ թանթէ: Ա՛խ, շնորհակալութիւն, Հայր, շնորհակալութիւն:

Հոգին կուզայ թեւէն կը մտնէ եւ կը տանի: Օրման- եան ճամբան ինքնիրենը.

— Աս ալ շահեցանք: ասիլէ՞ ետքը: Մէյմը սա Հոգին բոլորովին ինձի կապեմ, անոր միջոցաւ Երբորդութիւնը չորրորդութեան վերածել կուտամ, օր մըն ալ մեծամաս- նութիւն կը շահիմ եւ կ'անցնիմ Հօրը տեղը: Ան աշ- խարհքն ալ համբերելով գործը դիտող խելացիինն է, աս աշխարհս ալ:

* * *

Հայր Աստուած ա՛լ հարկ չի տեսներ միւս Պատրի- արքները կանչել. ամէնքն ալ աս պիտի ըսեն ան պիտի ըսեն մէջէն պիտի ելլեն: Ինք սակայն գործին աղէկ մը տեղեկացած էր, ու վճիռը կուտայ.

— Դուք, տարաբաղգներ, ինչ որ քաշեցիք աշխարհի մէջ կը բաւէ ձեզի. դուք պատասխանատու չէք ձեր մեղ- քերուն համար. դուք զոհերն էք ընչաքաղց մեծատուննե- րուն, կը ներեմ ձեզի ամէն ինչ. դացէք արքայութիւն եւ հանգստացէք:

Կարապետ եւ Բիւզանդ Գարակէօղեան, զատուցէք միւսներէն, քիչ մը աւելի մեղմ պիտի վարուիմ ձեզի հետ: Իսկ դուք մնացած բոլոր Գարակէօղեաններ, զրկե- ցիք աղքատը եւ բարերար հոգակուեցաք, խաբեցիք մտղ- վուրդը եւ օրհնեալ գերդաստան կոչուեցաք. կորէք դէպք, անիծեալ գերդաստան:

ՍԿԵՊՏԻԿ

ՕՐ ՈՒ ԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ Ը

Նոր տարիի առաջին օրերուն հետ «Տէյլի Թէլէկ-րաֆ» հեգնութեան կաղընդէքի մը պէս մեզի կուտար հեռագիր մը զոր էր Պոլսէն ստացած էր. — Դիտարհնե-րը նորէն պահանջումներ ըրած են բարեկարգութեան ծը-րագրին համար: Քանի որ անգամ է որ նոյն լուրը նոյն մշտատիպ կազմակերպին սակ կարգացինք այսպէս երոպական մասուլին մէջ, առաջները յայտի խնդրութիւն-ներով, սրտի սլացքներով, յետոյ քիչ քիչ տարակոյսնե-րով, վհատութիւններով, անտարբերութեամբ ու ա՛լ հիմա ընկճող զայրոյթով մը՝ ցուրտ կատակի մը պէս մեզի ցոյց տրուած այդ խրտուիչակին դէմ:

Նոյն օրը իսկ սակայն, անգլիական ուրիշ թերթի մը, «Սթանտարտ»ի մէջ երեւցած մէկ հեռագիրը բացատրիկ կարեւորութիւն մը կուտար «Տէյլի Թէլէկրաֆ»ի քննչէին: Պոլսէն կը հեռագրեն պահպանողական մեծ թերթին թէ — Դուրը հաւանօրէն ուժ պիտի ապ խոտուութիւններու, որպէս զի յետագէ բարեկարգութիւնները:

Օսմանեան քաղաքականութեան մտէն հետեւողնե-րուն՝ ո եւ է զարմանք չի պիտի պատճառէ այս լուրը: Չգինք հայկական խնդիրը, բայց ահա կրէտէի գործը իր ծագումին մէջ էն լուսաւոր ապացոյցն է այդ տխուր ու ոճրագործ քաղաքականութեան: Պ. Վիգոր Պէրար, ո-րուն հայերս միշտ երախտագէտ պիտի մնանք՝ Ֆրանսայի հանրային կարծիքը այնքան արաբար ու այնքան ան-կողմնակալ կերպով լուսաւորելուն համար հայկական խնդրին վերաբերմամբ, Պ. Վիգոր Պէրար կրեաւ եր-թաւով տեղին վրայ ուսումնասիրեց ինչպիսիք, ու ահա «Ռելիւ տը Բառի»ի մէջ իր յօդուածները սրտշակի ցոյց կուտան թէ այն խոտուութիւնները որոնցմէ ծնաւ կրե-տէի խնդիրը, լսիկ է. Պոլսէն տրուած հրահանգներու ուղ-ղակի արդիւնքն էին՝ մտաւարտ զիջումներէ խուսափելու հաշուով: Օրը օրին ապրող այդ Թիւրքերը միշտ լուա-գոյն կը նկատեն երկիրը արիւնստել ու կործանել, փախ-չելու համար այն պարտականութիւններէն զորոնք ի գործ դնել կը ստիպեն զիրենք ժամանակն ու գէպերը:

Նոյն խաղը այսօր անգամ մը եւս պիտի վերսկսին մեզի համար: Նորէն թոյլ պիտի տրուի ուսմբի մը կամ ուսմբերու պայթումը է. Պոլսէն, որպէս զի Դուրը բարե-կարգութեան ծրագիրը ձեռնարկին իրեն ներկայացող զեպաններուն անգամ մը ես կարենայ կրկնել իր բանա-ձեւը, որ մեր արիւնովը կը գրուի ամէն անգամ. «Սպա-սեցէք սա խոտուութեանց վերջանալուն:»

Ժամանակ է սակայն որ ա՛լ թող չի տանք օսման-եան քաղաքականութեան՝ իր պատուանդանը հաստա-տել մեր մարմիններուն վրայ: Ան իր եղեռնական գերը լաւ կը կատարէ միշտ, շա՛տ լաւ դժբաղդաբար, ու մենք, իր գոհերը, պէտք է գաղտնիք իր թատերաբեմը յարգա-բեղէ ու լայսերը վառելէ: Կը բաւէ ողբերգութիւնը որուն զերակատարները եղանք. անոր սրբութիւնը ու մեծու-թիւնը պահենք լուս, ինքնամփոփ ու ակնդէտ, ու մեր վրայ լացնել սալէ կտրը, մեր ցաւին ահաւորութեամբը Մարգարէութեան խիղճը վրդովելէ յետոյ, արհամարհանքի ծիծաղը չհրաւիրենք մեր վրայ:

* * *

Այս վերջին օրերու երոպական քաղաքականութեան էն ուշագրաւ գէպն է Չինաստանի ծովեզերեայ մէկ կէ-

տին, Գիւսօ—Չօի գրաւումը Գերմանիոյ կողմէ: Երկու գեր-ման միտինարի սպանումը Չինացիներու կողմէ՝ բաւական եղաւ որպէս զի Գերմանիոյ կայսրը հրաման զրկէ գրաւելու չինական անհուն կայսրութեան մէկ մասը, ուրը գնելու այդ հոկային վզին վրայ, սրուն համար մանաւանդ ստեղ-ծուած է կարծես բացատրութիւնը թէ գաճէ ոտքեր ունի: Վիլհելմ կայսրը ներշնչուած խաչակրի մը, միջին դարու ասպետի մը խանդավառ խօսքերով չինական ջուրերը զը-կեց միանգամայն, նաւատորմով մը, իր եղբայրը, որ յայտարարեց թէ հոն պիտի երթայ քարոզելու «իր եղ-բօրը աւետարանը:»

Որչափ ալ նոյնհետայն մաքի առջեւ դայ բաղդատել այս երկու գերման միտինարներուն ու բիւրաւոր հայ նահատակներուն ջարդը ու անոնց ազդեցութիւնը Վիլ-հելմ կայսեր վրայ, չճանրանանք սակայն այս համեմա-տութեան վրայ: Նոյն մարդը որ հարիւր հազար քրիստո-նէի ջարդերուն ատեն խնդակցութիւններ ու ընծաներ կը զրկէր անոնց հեղինակին, յանուն քրիստոնէութեան գե-րագոյն շահերուն խօսեցաւ՝ երկու միտինարի մահուան վրէժը լուծելու պատրաստուած ժամանակ: Բայց, կը կրկնենք, այսօրիս բաղդատութիւն մը ընելը՝ լսիկ խորհողի հեգնութիւն մը պիտի ըլլայ, իմաստասերի գառն վայելք մը: Այս վերջացող դարուն վախճանին, ամբողջ աշխար-հի մէջ, մենք Հայերս միայն գոնուեցանք այնքան միա-միտ՝ կարծելու համար թէ երոպական աղբերը վարող ազգայինները զպացուեցնեն են, եւ ոչ թէ շահերը: Սուղի նստաւ մեզի ասիկա:

Չէ, այս գէպին մէջ զիտելիք էն կարեւոր բանն է Անգլիոյ գերբը: Երբ իմացուեցաւ թէ Գերմանիա գրաւել է Գիւսօ—Չօն, ամբողջ անգլիական մամուլը ծաղր ու նախատինք չմնաց որ չթափէր Վիլհելմ կայսեր գը-լտուն: Բոլոր մտքերը բոլորքս լին, ու լեզուայն կը հասկցնէին թէ Անգլիա թող չի պիտի ապ որ Գերմանիա հողային գրաւում մը կատարէ ու տեղաւորուի այն երկ-րին մէջ, ուր Անգլիա այնքան ահագին շահեր ունի:

Այսօր, հրաշքով մը կարծես, նոյն այդ մամուլը բո-լորովին մոռցած կը թուի այդ գէպը: Գերմանացիները զիտցան հաճեցնել Չինաստանը որ վաւերացնէ իրենց կա-տարած գրաւումը, ու հիմակ կը տեղաւորուին հոն: Ոչ մէկ բողոք, ոչ մէկ ճիկ Անգլիայէն:

Ու քաղաքականութեամբ զբաղողները ահա այս եր-րորդ անգամն է որ կը հաստատեն թէ Անգլիա տեղի կու-տայ ամէն յանգուգն քայլի առջեւ զոր կ'առնէ Գերմանիա: Լորտ Սոլզպերի մարտեց Վիլհելմ կայսեր ուղղած մեծապղտրդ հեռագիրը Թրանսիլաւի նախագահին: Լորտ Սոլզպերի թող տուաւ որ Գերմանիա իր բարոյական գեր-իշխանութիւնը տարածէ Թիւրքիոյ վրայ, ու ահա հիմակ ալ ձայն չի հաներ Չինաստանի մէջ ըրած ոտնձգութեան:

Լորտ Բանտոլֆ Չըրչիլ, որ սակայն պահպանողա-կան մըն էր — իրաւ է որ սակայն իր կուսակցութեան ա-նառակ աղան, պոռաք անգամ մը թէ Լորտ Սոլզպերիին պէս թոյլ ու նահանջող մարդ ճանչցած չէ: Ու Պիլզմարք, ուսի մարդը, ահաւոր խօսքով մը որակած է Անգլիոյ ար-գի վարիչը. «Երկաթի ներկիւ եղէզ մըն է ան:» Ու Լորտ Սոլզպերի բան մը ըրած չունի սուտ հանելու համար այս պատաստանին ճշմարտութիւնը. ընդհակառակը.

ՄԱՐԴ ՄԸ

Ֆրանսա այս միջոցին կը պարզէ տեսարան մը որ տարօրինապէս թեւազրական է: Արդարութեան խնդրով մը կը տառապի այդ մեծ երկիրը:

Ֆրանսական սպայակոյտին մէկ քանի գաղտնիքները օտար երկրի սը, Գերմանիոյ հաղորդած ըլլալու ամբաստանութեամբը դատապարտուած ու արքայութեամբ Տրէֆիւս հարիւրապետին խնդիրն է ասիկա: Երեք տարի անցան այն օրէն ի վեր ուր Տրէֆիւս զինուորական ատեանին առջեւ դատուելէ, դատապարտուելէ ու հրապարակաւ զինուորութենէ արտաքսուելէ ետքը, Կիւյան զրկուեցաւ, ծովուն մէջ ժայռի մը վրայ մինաւորիկ քաւելու սփիրը ուրուն համար ամբաստանուած էր:

Ու ահա մէկ քանի ամիս առաջ տարակոյտներ յայտնուեցան Տրէֆիւսի յանցաւորութեան մասին: Երբապետական մը, անաղարտ ու պայծառ կեանքովը ամենէն յարգուած, Պ. Շէօրէր-Ֆէսպէր, ձայն բարձրացուց եւ յայտարարեց թէ ինք համոզուած է որ Տրէֆիւս յանցաւոր չէ եւ թէ ուրիշի մը ոճիրն է որ կը քաւէ: Պ. Մաթիէօ Տրէֆիւս, դատապարտեալին եղբայրը, հրապարակաւ յայտնեց թէ հազարապետ Էսպերազին է որ գործած է այն ոճիրը որուն համար դատապարտուեցաւ Տրէֆիւս:

Ռուսիի մը պէս պայթեցաւ այս յայտնութիւնը. Ֆրանսա ամբողջ զողաց: Կառավարութիւնը խորհրդարանին բեմէն յայտնեց թէ Տրէֆիւս օրինաւորապէս դատապարտուած էր, բայց հանրային կարծիքը այնքան տակնուվրայ էր որ զինուորական ատեան մը հարկ համարեց դատել, դոմփակ, հազարապետ Էսպերազին, բայց անմեղ հոշակեց զանի:

Կը կարծուէր թէ այս վճիռը պիտի փակէր խնդիրը, երբ առաջուրնէ աւելի ուժգնութեամբ բռնկեցաւ: Էմիլ Զոլա իր ամբողջ ուժովը մէջտեղ նետուեցաւ ի նպաստ Տրէֆիւսի, ու Ֆրանսական Հանրապետութեան Նախագահին ուղղուած նամակով մը բացէ ի բաց ամբաստանեց Ֆրանսական բանակին մէկ քանի պետերը ու սպայակոյտի անդամները թէ, գիտնալով հանդերձ Տրէֆիւսի անմեղութիւնը, թող տուած են որ զայն դատապարտելու ոճիրը ի գործ դրուի ու այսօր ալ կը շարունակեն մեղսակիցները մնալ այդ ոճիրին՝ թող չի տալով որ արգարութիւնը իր լոյսը սփռէ ու անմեղ մը ազատի:

Երբեք այսպիսի նամակ մը գրուած չէ, ու երբեք մարդ մը, միս մինակը, այսքան խիզախօրէն զիմադրուած չէ ամբողջ երկրի մը: Զոլա իր դէմը ունի Ֆրանսայի կառավարութիւնը, մամուլը, բանակը, ու մանաւանդ հանրային կարծիքը որ իրեն դէմ կը մրմնայ ու լուտանքներ կ'արձակէ: Բայց ան ժայռի մը պէս անխախտ կեցած է: Գիտէ իր ըրած ամբաստանութեանց ծանրութիւնը, ու կը պահանջէ որ դատի քաշեն զինքը:

Իր նամակին վերջաբանը պիտի մնայ իբր էն վեհմ ազաղակը արգարութեան ծարաւի մարդու մը, որ ա՛լ կարծես մենէ չէ, այս յագնած ու զառածած մարդկութեանէն, հապա այն հաւատքի, արութեան ու սիրոյ ժամա-

նակներէն ուր մարգարէները կը ծագին ու մարտիրոսները վզերնին կ'երկընցնեն:

«Չեմ ճանչնար ու չեմ ալ տեսած մարդիկը զորոնք կ'ամբաստանեմ, անոնց դէմ ո՛չ ոք ունիմ ո՛չ ատելու թիւն: Ինձի համար ուրիշ բան չեն անոնք բայց եթէ մարմնաւորումներ, ընկերային փաստարարութեան ոգիներ: Եւ հիմակ իմ կատարած գործս ուրիշ բան չէ բայց եթէ յեղափոխական միջոց մը՝ փութացնելու համար ճշմարտութեան ու արգարութեան պողովուրդը:

«Ես մէկ իղձ մը ունիմ, լոյսին իղձը, յանուն մարդկութեան որ այնքան տառապած է ու իրաւունք ունի երջանիկ ըլլալու: Իմ հրաւիրու բողոքս ուրիշ բան չէ բայց եթէ հոգիիս ազաղակը: Թող համարձակին ուրեմն իս եղեռնապատ ատեանին առջեւ քաշել եւ թող քննութիւնը տեղի ունենայ ամենուն աչքին առջեւ:»

Դատը մօտերս տեղի պիտի ունենայ, ու Զոլա պիտի հրաւիրուի մէջտեղ դնելու իր փաստերը, հրապարակաւ: Կը սխալի՞ կոր արդեօք: Չէ՛: Իր ձայնը՝ խարուած մարդուն ձայնը չէ: Իր հանճարի աչքերը, որոնք մարդկութիւնը ամբողջ խորագնեցին, ճշմարտութիւնը կը տեսնեն կոր: Արգարութիւնն է որ իր բերնովը կը գոռայ կոր, օրուան շահերը, օրուան մտահոգութիւնները արհամարհելով, մարդկութեան գերագոյն ճակատագրին կատարմանը մէջ՝ որ դէպի լոյսը, դէպի երջանիկութիւնը կը դիմէ: Իր բողոքը ա՛լ աւելի զօրաւոր, ա՛լ աւելի կորովի կրկնութիւնն է «Սատկէ՛, ընկերութի՛ւն» պատմական ազաղակին, քանի որ այդ ընկերութիւնը թող կուտայ կատարուելը անարգարութեանց, ու կը ճգմէ տկարը:

Մարդ մըն է որ կ'ընէ կոր այս ամէնը, ուրախ սրբտով մը մէջտեղ նետելով տարիներու չարչարանքով վաստակուած անունը, յարգանքը, հիացումը: Մեծ մարդ մըն է ան, Մարդ մը: Ու այս տեսարանին առջեւ, որ այս զարավերը կը բոցավառէ, սքանչացած ու պատկառոտ, Յոյսին սարսուռը կ'ունենամ՝ ամէն Արդար Դատի յամբ բայց ապահով յառաջխաղացութեանը համար:

Լ. ԶԱՐԹ-ՌԻՄԵԱՆ

ՀԱՍՏԻ ՌԻ ԲԱՃՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին զրկել առ

M. L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեզինն է Եւրոպայի Համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 Փրանք, Ամերիկայի Համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տողար: Կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15 ին:

Կը խնդրուի անոնցմէ որոնք առաջին ե երկրորդ թիւը ստացան, յայտնել վերոգրեալ հասցէին թէ կը փափաքի՞ն որ Նոր Կեանքը կանոնաւորապէս զրկուի իրենց, ներփակելով միանգամայն իրենց բաժնեզինը: